12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2013 ՇԱԲԱԹ 174(5257)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Բարաք Օբաման մոռացել էր Ադրբեջանի նախագահական ընտրությունները

Նախորդ համարում տեղեկացրել էինք, որ չնայած Ադրբեջանում նախագահական ընտրությունները տեղի են ունեցել հոկտեմբերի 9-ին, իսկ նախնական արդյունքները, ըստ որոնց գործող նախագահ Իլհամ Ալիեւը հավաքել է շուրջ 85 տոկոս ձայն, հրապարակվել էին հոկտեմբերի 10-ին, բայց Արեւմուտքը որեւէ կերպ չի շնորհավորել Իլհամ Ալիեւին երրորդ անգամ անընդմեջ նախագահ վերընտրվելու կապակցությամբ:

Մենք եզրակացրել էինք, որ գուցե Արեւմուտքը բառեր չունի, որոնցով կարելի է շնորհավորել Ալիեւի «փայլուն հաղթանակը», կամ գուցե չի էլ պատրաստվում շնորհավորել ազգային խորհրդանիշի որդուն, քանի որ նրա «տպավորիչ հաղթանակը» ձեռք է բերվել տպավորիչ ընտրակեղծարարությամբ:

Պետք է նշենք, որ սխալվեցինք. ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման, ինչպես երեկ հաղորդվեց, շնորհավորել է Իլհամ Ալիեւին... Բայց Օբամայի շնորհավորական ուղերձում կարդում ենք. «Ես եւ իմ կինը` Միշելը, ցանկանում ենք Ամերիկայի եւ ողջ աշխարհի մահմեդականներին մեր լավագույն ցանկությունները փոխանցել Ղուրբանի օրվա կապակցությամբ եւ ցանկանում ենք, որ ուխտավորները հաջողությամբ ավարտեն իրենց ուխտագնացությունը»: Վերջ... Այսինքն` Բարաք Օբաման մոռացել էր, որ հոկտեմբերի 9-ին Ադրբեջանում նախագահական ընտրություններն էին, եւ այդ ընտրություններում բոլորից առաջ անցավ Իլհամ Ալիեւը: Հակառակ պարագայում, նա հաստատ կհիշատակեր իր ուղերձում նաեւ այդ «տպավորիչ հաղթանակը» եւ առնվազն մեկ պարբերությամբ կշնորհավորեր Իլհամ Ալիեւին նախագահի վերընտրվելու կապակցությամբ եւ կխոսեր` «ԱՄՆ-Ադրբեջան խոր բարեկամական, ռազմավարական հարաբերությունները էլ ավելի խորացնելու երկկողմ պատրաստակամության կարեւորությունից»: Օբաման, սակայն, բավարարվել է միայն ընդհանուր, բոլոր մահմեդականներին ուղղված իր շնորհավորանքով:

Ավելին, Օբամայի ուղերձին նախորդել էր ԱՄՆ պետքարտուղարության պաշտոնական արձագանքը` Ադրբեջանի նախագահական ընտրություններին: Պետքարտուղարությունն իր ուղերձում դրանք որակել է որպես «ոչ ժողովրդավարական»: Ադրբեջանի նախագահի մամուլի քարտուղար Ազեր Հասիմովը ԱՄՆ պետքարտուղարության հիշյալ ուղերձն անվանել է «ոչ օբյեկտիվ եւ կանխակալ»: Արդեն Հասիմովի արձագանքից հետո Օբաման շնորհավորել է Իլհամ Ալիեւին ոչ թե որպես կարեւոր գործընկեր երկրի վերընտրված նախագահի, այլ որպես շարքային մահմեդականի:

Նշենք նաեւ, որ ԵՄ երկրները առհասարակ որեւէ իրադարձության կապակցությամբ դեռեւս չեն շնորհավորել Իլհամ Ալիեւին, փոխարենը, ինչպես երեկվա համարում ենք տեղեկացրել` «Պուտինը Իլհամ Ալիեւից պահանջում է ռազմավարական գործընկերության նոր մակարդակ»:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

**ԹՈՒՐՔՄԵՆՉԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 200-ԱՄՅԱԿ**

# Ղարաբաղի խնդիրը Ռուսաստանի խնդիրն է

*Ռուսաստանի Դաշնության նախագահ պարոն Վ. Վ. ՊՈՒՏԻՆԻՆ*

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

**«Պատմությունը նման է իշխանությանը. երբ մարդիկ լավ են զգում, մոռանում են նրա մասին եւ իրենց են վերագրում սեփական բարերարությունը: Իսկ երբ վիճակը վատանում է, նրանք սկսում են զգալ նրա անհրաժեշտությունը եւ գնահատել նրա բարերարությունը»**

**...Պատմությունը խիստ է պատժում դասերը չիմանալու համար**

(Վ.Օ.Կլյուչեւսկի)



Մեծարգո Վլադիմիր Վլադիմիրովիչ: Ամենից առաջ կուզենայի անկեղծորեն խոստովանել, որ նամակիս չափից ավելի մեծ ծավալը խորապես իմաստավորված, պայմանավորված է այն թեմայի պատմական անհրաժեշտությամբ, ես նույնիսկ կասեի` ռազմավարականությամբ, որի մասին ցանկանում եմ պատմել Ձեզ: Եթե Դուք իմ նամակը կարդաք, ինչպես ասում են` առանձին կտորներով, կամ էլ եթե ընդհանրապես չկարդաք, ես դա կընդունեմ նորմալ եւ սթափորեն: Սա բոլորովին էլ մի ինչ-որ կոկետություն չէ: Սա կյանքի իրողություն է: Բանն այն է, որ ես այսօր չէի կարող չգրել իմ բաց նամակը: Միաժամանակ անիմաստ կլիներ այն հասցեագրել մեկ ուրիշին:

▼▼▼

Այս նամակի հիմքում ընկած են նշումներ արված Գյուլիստանի պայմանագրի լուսանցքներում: Ընդգծեմ, որ դրանց մեջ մի քանի անգամ հանդիպում է Ձեր ուսուցչի, Լենինգրադի համալսարանի պրոֆեսոր Անատոլի Սոբչակի անունը: Եվ ահա ցանկություն առաջացավ բաց նամակն սկսել նրա բառերով. **«Գորբաչովի, եթե չասենք` մեր ողջ դժբախտությունը սկսվեց նրանից, որ հայկական ինքնավար մարզը հայկական միութենական հանրապետությանը միացնելու հայերի տրամաբանական պահանջը նա որակեց որպես «Ղարաբաղի խնդիր»: Մինչդեռ, դա ավելի շատ Ռուսաստանի խնդիրն է...»:**

*Տես էջ 4*

# Օմբուդսմեն. Կոմայգու այլասերվածությունը վերացնելը անհրաժեշտ է... հնարավոր է... եվրոպական է...



**Տեւական ժամանակ է, ինչ քաղաքացիները մեզ բողոքում են, իսկ հանրությունը վրդովված է, որ մի շարք անձինք Կոմայգում պարբերաբար զբաղվում են պոռնկությամբ, ինչպես նաեւ ունենում սեռական հարաբերություններ հենց մանկական այգու տարածքում:**

**Նման այլասերվածությունը անհրաժեշտ է վերացնել, քանի որ դա ոչ միայն անբարոյական է, այլեւ անօրինական: Այսպես, պոռնկությամբ զբաղվելու համար պատասխանատվություն է նախատեսվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 1791-րդ հոդվածով: Հասարակական վայրում սեռական հարաբերություններ ունենալը կարող է որակվել որպես խուլիգանություն` Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի համապատասխան:**

*Տես էջ 2*

# Ռեկտորը պարզաբանում է, դասախոսները պահանջում են ռեկտորի հրաժարականը

**Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) դասախոսները բուհի ռեկտոր Արա Ավետիսյանի պարզաբանումներից գոհ չեն: Հանդիպումից հետո եկել են եզրակացության, որ բուհը ֆինանսական կոլապսի առաջ է կանգնած, ինչը ռեկտորը փորձում է լուծել դասախոսապրոֆեսորական կազմի հաշվին` նրանց աշխատավարձերը կրճատելով եւ աշխատանքային ծավալը մեծացնելով:**

**Համալսարանի ֆիզիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Խաչատրյանի խոսքերով` ռեկտորը կատարվածը ներկայացնում է բարեփոխումների շղարշի ներքո: «Քննարկումներից հասկացանք, որ անհրաժեշտ է գումարել բուհի կառավարման խորհրդի նիստ: Ամենայն հավանականությամբ, համալսարանում նոր ստորագրահավաք կսկսենք` կառավարման համակարգի խորհրդի նիստ անցկացնելու համար:**

*Տես էջ 3*

# Նոբելյան մրցանակ` Քիմիական զենքի արգելման կազմակերպությանը

Օսլոյում հոկտեմբերի 11-ին հայտարարվել է 2013 թ. խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկրի անունը. դա Հաագայում գործող Քիմիական զենքի արգելման կազմակերպությունն է: BBC-ն հաղորդում է, որ Նորվեգիայի Նոբելյան հանձնախումբը այս տարի ընտրություն էր կատարում 259 թեկնածուների միջեւ: Այդքան շատ հավակնորդներ ոչ մի տարի չէին եղել հանձնախմբի 112-ամյա պատմության ընթացքում: Ըստ որում, հանձնախմբի համառոտ ցանկում հայտնված անձանց եւ կազմակերպությունների անունները ավանդաբար գաղտնի են պահվում: Այսպես, 2013 թվականի անվանացանկը կգաղտնազերծվի միայն 50 տարի հետո:



Նորվեգական NRK հեռուստաալիքը նշում է, որ Քիմիական զենքի արգելման կազմակերպությունը վերջերս Սիրիայում կատարած աշխատանքի շնորհիվ այժմ շատ հաճախ է հիշատակվում լրատվական թողարկումներում: Կազմակերպությունը ՄԱԿ-ին օգնում է տվյալներ հավաքել Սիրիայի քիմիական զենքի պաշարների վերաբերյալ` դրանց ոչնչացման նպատակով: Սեպտեմբերի 27-ին կազմակերպությունը ներկայացրեց Սիրիայի քիմիական ամբողջ զինանոցի ոչնչացման հստակ ծրագիր: Ուստի խաղաղության Նոբելյան մրցանակի շնորհման հարցում Նոբելյան հանձնախմբի կատարած ընտրությունը միանգամայն արդարացված է:

Պ. Ք.

# Գյումրու քաղաքապետի մեկ տարին



Հոկտեմբերի 11-ին լրացավ Գյումրու քաղաքապետ **Սամվել Բալասանյանի** պաշտոնավարման մեկ տարին: Այս կապակցությամբ հրավիրված մամուլի ասուլիսում համայնքի ղեկավարը ներկայացրել է ըստ տարբեր ոլորտների կատարված աշխատանքները ու առկա վիճակը, նաեւ` նախանշված անելիքները:

Ինչպես հայտնի է, այս տարի քաղաքի կենտրոնական հատվածներում փողոցների ասֆալտապատման բավական ծավալուն աշխատանք կատարվեց: Այդ նպատակի համար 300 մլն դրամ տրամադրել էր հանրապետության կառավարությունը, 410 մլն էլ տարվա ընթացքում ծախսվել է համայնքային բյուջեի միջոցներից: Հիմնովին ասֆալտապատվել են կենտրոնական մի շարք փողոցներ, «Վարդանանց» եւ Ջիվանու հրապարակները, մյուս հատվածներում իրականացվել են փոսային նորոգումներ: Ասֆալտապատման ընդհանուր մակերեսը կազմել է շուրջ 102 հազար քառ. մ, բարեկարգված փողոցների ընդհանուր երկարությունը` մոտ 52 կմ:

Խոսելով քաղաքի աղբահանության կազմակերպման մասին, համայնքապետը տեղեկացրել է, որ նորոգվել է քաղաքային աղբավայր տանող 1,5 կմ երկարությամբ գրունտային ճանապարհը, քաղաքի տարբեր հատվածներում տեղադրվել են մեծ ու փոքր աղբամաններ, կառուցվել են աղբապատնեշներ, աղբահանությունը կատարվում է կարգավորված գրաֆիկով, իսկ այս ամենով հանդերձ` նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ առկա է մոտ 70 մլն դրամի խնայողություն:

Բնակավայրի բարեկարգման աշխատանքների թվում Բալասանյանն առանձնացրել է «Մայր Հայաստան», «Պատվո բլուր», Երկրաշարժի զոհերի հուշահամալիրների, Հայուհու հուշարձանի տարածքների, «Վարդանանց» եւ Թատերական հրապարակների շատրվանների բարեկարգումն ու նորոգումը, տարբեր փողոցներին հարակից մայթերին ու հանգստյան գոտիներում շուրջ 100 նստարանների տեղադրումը եւ այլն:

Կոմունալ տնտեսության ոլորտում, մասնավորապես, նշվել է փողոցների, տարածքների արտաքին լուսավորության էներգախնայողական լամպերի շահագործումը, նաեւ այս ճանապարհով նախորդ տարվա համեմատ 22 մլն դրամի խնայողությունը, թվով 14 խաչմերուկներում հների փոխարեն նոր, թվային լուսաֆորների տեղադրումը:

Քաղաքային տրանսպորտի ոլորտում իրենք լուրջ բարեփոխում էր 10 նոր ավտոբուսների շահագործումը քաղաքի, որքան մեզ հայտնի է, առայժմ մեկ երթուղում, քաղաքապետը տեղեկացրել է, որ մոտ ժամանակներս եւս 5 նոր ավտոբուսներ կներկրվեն, որոնք կաշխատեն եւս մեկ երթուղում:

Ներկայացվել են տեղեկություններ նաեւ մշակույթի, սպորտի, միջազգային կապերի, ֆինանսական եւ մյուս ոլորտներում կատարված ու նախանշված աշխատանքների, առկա մի շարք հիմնախնդիրների մասին: Սպորտի ոլորտի հետ կապված, մասնավորապես նշվել է, որ ընթացիկ տարում գյումրեցի մարզիկները միջազգային ասպարեզներում նվաճել են 208 մեդալ:

Գ. Մ.

ԳԼԵՆԴԵՅԼ

# Հայ դատի «Ժառանգություն» մրցանակը` Մանաս Պուճիկյանին

Նոյեմբերի 30-ին Գլենդեյլի (Կալիֆոռնիա) «Լոս Հոլիվուդ» հյուրանոցի «Ռեյ Դոլբի» պարահանդեսային շքեղ դահլիճում կայանալիք Հայ դատի կոմիտեի տարեկան ճաշկերույթի ժամանակ «Ժառանգություն» մրցանակը շնորհվելու է ճանաչված ձեռնարկատեր, դաստիարակ եւ Ամերիկայի արեւմտյան շրջանի Հայ ազգային կոմիտեի ակտիվ անդամներից Մանաս Պուճիկյանին: Ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ բարձրագույն այդ մրցանակը նրան է շնորհվում 30 տարվա անբասիր աշխատանքի եւ բարեգործությունների համար: Նա Հայ դատի անխոնջ ջատագովներից է եղել եւ շարունակում է իր նվիրական աշխատանքները ինչպես ամերիկյան կառավարական, այնպես էլ զանգվածային լրատվամիջոցների շրջանակներում:



*Մանաս Պուճիկյանը Հայ դատի նախագահ Քեն Խաչիկյանի, վարչության համանախագահ Քրիս Գուլջյանի եւ վարչության անդամ Րաֆֆի Համբարյանի հետ:*

Պուճիկյանը ծնվել է Քեսաբում (Սիրիա) 1932-ին: 1954-ին ծնողների եւ նրանց մյուս չորս զավակների հետ Մանասը տեղափոխվել է Մ. Նահանգներ, որտեղ նա ինժեներ-մեխանիկի մասնագիտություն է ձեռք բերել Կալիֆոռնիայի պետհամալսարանից, ապա ուսումը շարունակել է Հարավային Կալիֆոռնիա համալսարանում եւ Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանում: Ներկայումս նա իր տիկնոջ` Դոնալիի հետ ապրում է Տորանսում: 1983-ից նա մեկ անգամից ավելի ընտրվել է Հայ դատի ազգային վարչության անդամ եւ 400 հազար դոլար խոշոր նվիրատվությամբ օժանդակել կոմիտեի ձայնը լսելի դարձնելու աշխատանքներին:

«Մանաս Պուճիկյանը լիովի արժանի է այդ մրցանակին: Նա գործին նվիրված առաջնորդ է, եւ մենք երախտապարտ ենք նրան», նշել է այս առթիվ Հայ դատի (արեւմտյան շրջանի) տնօրենների վարչության համանախագահ Նորա Հովսեփյանը:

Հ. Ծ.

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

# 10.000 դարկ վառելափայտ անօթեւաններին

**«Շիրակ կենտրոնը» նախորդ ձմռանը Գյումրու վագոն-տնակներում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքներին, արտերկրի բարերարների եւ կազմակերպությունների աջակցությամբ, տրամադրեց շուրջ 2000 դարկ վառելափայտ: Ընթացիկ ձմռանը անօթեւան ընտանիքներին ջերմություն պարգեւելու նպատակով նախաձեռնել ենք «10.000 դարկ վառելափայտ անօթեւան ընտանիքներին» ակցիա: Կոչ ենք անում բոլոր բարեսիրտ մարդկանց միանալ մեր նախաձեռնությանը:**

**Նախաձեռնությանն արդեն իսկ միացել են եւ անօթեւան ընտանիքներին բաժանելու նպատակով «Շիրակ կենտրոնին» տրամադրել են վառելափայտի գումար.**

**1. Ամերիկյան «Փարոս» եւ «Մարկ Թոգնացի հիշատակի» հիմնադրամները, «Marc Tognazzi Memorial Found» and «Paros Foundation» - 300 դարկ:**

**2. Ամերիկահայ բարերար Էլվիս Մադաթյան - 200 դարկ:**

**3. Լոնդոնում բնակվող մեր նախկին համաքաղաքացի Գարիկ Բարսեղյան - 10 դարկ:**

# 83 մաքսանենգ բջջային հեռախոսներ են առգրավվել

**Ինչպես տեղեկացանք ազգային անվտանգության ծառայության մամուլի կենտրոնից, երեկ ծառայության իրականացրած օպերատիվ-հետախուզական միջոցառումներով բացահայտվել է բջջային հեռախոսների մաքսանենգ ներկրման դեպք:**

**Երեւանի բնակիչ Արմեն Զաքարյանը, իրեն պատկանող «Մերսեդես» միկրոավտոբուսի ուղեւորի նստարանի տակ հարմարեցված թաքստոցում, Վրաստանից «Բագրատաշեն» մաքսակետով` շրջանցելով մաքսային հսկողությունը, Հայաստան է տեղափոխել 83 հատ IPhone-5, Samsung Galaxy եւ այլ մոդելների բջջային հեռախոսներ: Փաստի առթիվ ՀՀ ԱԱԾ քննչական վարչության կողմից հարուցվել է քրեական գործ ՀՀ Քր. օր-ի 215 հոդվածի հատկանիշներով:**

# Օմբուդսմեն. Կոմայգու այլասերվածությունը վերացնելը անհրաժեշտ է...

*1-ին էջից*

**Երեւանի քաղաքապետը իր գրությամբ մեզ հայտնել է, որ դրանով պետք է զբաղվի Ոստիկանությունը: Ոստիկանությունն էլ այս հարցում անգործության է մատնված, քանի որ ըստ իրենց պաշտոնական պարզաբանման «պոռնկությամբ զբաղվելու կամ սեռական հարաբերություններ ունենալու վերաբերյալ ահազանգեր չեն ստացվել»:**

**Չենք կարող համաձայնել ոստիկանության դիրքորոշմանը, քանի որ ոստիկանությունն իրավասու է քրեական գործ հարուցել լրատվամիջոցից հանցագործությունների մասին հաղորդումներ ստանալիս: Ոստիկանությանը ներկայացրել ենք նշված այլասերվածությունների մասին վկայող մի շարք հրապարակումներ (այդ թվում` http://www.1in.am/arm/armenia–society–202416.html; http://politik.am/?p=8140; http://www.hayary.org/wph/?p=3129): Ըստ Ոստիկանության` «ներկայացված հրապարակումներում քրեական օրենսգրքով նախատեսված որեւէ արարքի ակնհայտ հատկանիշներ չեն մատնանշվում»: Մեզ համար ակնհայտ է հակառակը: Ոստիկանությունը Երեւանի այլ վայրերից պարբերաբար բերման է ենթարկում բազմաթիվ մարմնավաճառների` պոռնկությամբ զբաղվելու կասկածանքով (օրինակ` police.am/news/view/միջոցառումները-շարունակական-բնույթ-են-կրելու.html): Երկակի ստանդարտների ակնհայտ կիրառմամբ Կոմայգում նման օպերատիվ միջոցառումներ չեն իրականացվում:**

**Կոմայգում այլասերվածության վերացումը հնարավոր է, եթե Երեւանի քաղաքապետարանը ցանկապատի այգին եւ փակի այգու մուտքը գիշերային ժամերին (ինչպես օրինակ` Սիրահարների այգում), ինչպես նաեւ այդ ժամանակահատվածում ուժեղացնի լուսավորումը այգու շրջակայքում: Առավել եւս նման արատավոր երեւույթները կվերանան, եթե ոստիկանությունն ակտիվ գործողություններ ձեռնարկի նշված իրավախախտումների կանխարգելման եւ բացահայտման ուղղությամբ:**

**Մեր առաջարկները հիմնված են եվրոպական լավագույն փորձի եւ արժեքների վրա: Այսպես, դեռեւս 1910 թվականին Լոնդոնում փակեցին Թաուեր կամրջի ենթակառուցվածքների մեծ մասը` այնտեղ մարմնավաճառների անօրինական գործունեությանը վերջ դնելու նպատակով: Փարիզում այսօր էլ երեկոյան ժամերին փակվում է Տյուիլրիի այգու մուտքը: Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան հավասարապես պաշտպանում է թե՛ մարդու ազատությունները եւ թե՛ հանրության բարոյականությունը:**

ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Անցուդարձ

# Օկուպանտները չկարողացան բաժանել հողերը. կա զոհ

Ադրբեջանի նախագահի «ընտրություններից» մեկ օր անց արտակարգ միջադեպ է գրանցվել. «Գյոգյոլի եւ Շամքորի շրջանների միջեւ արոտավայրերից մեկում տեղի է ունեցել զանգվածային ծեծկռտուք»: Այդ մասին երեկ հաղորդել է virtualaz.org-ը: Տեղեկատվության աղբյուրը Գյոգյոլի շրջանի ոստիկանության վարչությունն է: Ըստ այդմ, «Գյոգյոլի շրջանի 4 եւ Շամքորի շրջանի 5 բնակիչների միջեւ տեղի ունեցած ծեծկռտուքի հետեւանքով մի քանի մարդ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Գյոգյոլի կենտրոնական շրջանային հիվանդանոց»:

Գյոգյոլի շրջանի Մոլլաջալիլի գյուղի 37-ամյա բնակիչ Խայամ Ջաֆարովը «ստացել է գանգուղեղային ծանր վնասվածք, որի հետեւանքով մահացել է հիվանդանոցում»: Մյուս տուժածների առողջական վիճակի մասին պաշտոնական հաղորդագրության մեջ ոչինչ չի ասվում: Փաստի առթիվ Գյոգյոլի դատախազությունում հարուցվել է քրեական գործ, տարվում է քննություն: Միջադեպի պատճառը «հատկացված արոտավայրի շուրջը կողմերի միջեւ ծագած վեճն էր»:

Սույն տեղեկատվությունը գուցե ուշադրություն չգրավեր, եթե խոսքը չվերաբերեր նշված շրջանների «միջեւ արոտավայրին»: Բանն այն է, որ Գյոգյոլ վերանվել է նախկին Խանլարի շրջանը, որի լեռնային հատվածը մինչեւ 1988 թվականը գերազանցապես հայաբնակ էր: Վերջին հայկական բնակավայրը՝ Գետաշենը, բռնատեղահանության է ենթարկվել 1991թ. մայիսի առաջին օրերին՝ Գյանջայում (նախկին Կիրովաբադ) տեղակայված խորհրդային զորամիավորման կողմից:

Մինչեւ 1988թ. մեծ մասամբ հայաբնակ էր նաեւ Շամքորի շրջանի լեռնային մասը: Ըստ տեղեկությունների՝ ադրբեջանական իշխանությունները բռնատեղահանման ենթարկված հայկական գյուղերում իրականացրել են «վերաբնակեցում»: Փաստացի, սակայն, Գետաշենը եւ հարակից տարածքները, որ ներառում են նաեւ Ալիհարակ (Գյոգյոլ) լճակն ու ավանդաբար հանգստյան գոտի են, ներկայումս հայտարարված են «փակ»: Այնտեղ առանձնատներ եւ զվարճանքի օբյեկտներ են կառուցել Բաքվի եւ Գյանջայի «նոր ադրբեջանցիները»:

Ադրբեջանական կողմի հաղորդագրությունը, որ զանգվածային ծեծկռտուքը տեղի է ունեցել Գյոգյոլի եւ Շամքորի «միջեւ արոտավայրի պատճառով», վկայում է, որ խոսքը վերաբերում է նախկինում հայաբնակ տարածքի նկատմամբ երկու շրջանների հավակնություններին: Ստացվում է, որ հայերից բռնազավթած հողերը վեճի, ծեծկռտուքի եւ վիճաբանության մասնակիցներից առնվազն մեկի մահվան պատճառն են դարձել:

Միջադեպը ցայտուն կերպով ապացուցում է այդ եւ օկուպացիայի տակ գտնվող այլ տարածքները «վաղնջական ադրբեջանական հող» հայտարարելու՝ Ադրբեջանում իշխող վարչախմբի քարոզչության ողջ սնանկությունը: Քանի որ եթե այդ տարածքները լինեին «ադրբեջանական», ապա երկու հարեւան շրջանների միջեւ «կռվախնձոր» չէին դառնա: Այդպես միայն լինում է այն դեպքում, երբ օկուպանտներն իրար միջեւ չեն կարողանում բաժանել «արդար ռազմավարը»:

Ավելի վաղ ադրբեջանական մամուլում հրապարակումներ էին արվել, որ «Գյանջայի տարածաշրջանում մեծանում է քրդական ներկայացվածությունը»: Ըստ երեւույթին, Բաքվում իշխող վարչախումբը նախկինում հայերին պատկանած տարածքները հեռագնա նպատակներով «սեփականաշնորհում է» էթնիկ քրդերին: Կան ակնարկներ, որ «տեղական բնակչության շրջանում աճում է դժգոհությունը»:

Բացառված չէ, որ Խայամ Ջաֆարովի մահվան պատճառ դարձած ծեծկռտուքը նույնպես էթնիկական անհանդուրժողականության հողի վրա է սկսվել: Ադրբեջանական կողմն այդ մասին, իհարկե, ոչինչ չի ասում, բայց կարելի է ենթադրել, որ արոտավայրի տնօրինման «իրավունքի» խնդիրը ծագել է տեղացի եւ եկվոր բնակչության շահերի բախման հետեւանքով:

Ինչն էլ, սակայն, բախման պատճառ եղած լինի, էականն այն է, որ նշված տարածքները մինչեւ 1988թ. պատկանել են հայերին, որոնք ենթարկվել են ունեզրկման եւ բռնատեղահանության, իսկ «իսկական տերերին» այդպես էլ չի հաջողվում կիսել «արդար վաստակը»: Երեւույթը չափազանց բնութագրական է այսօրվա Ադրբեջանի համար, որտեղ վարչախումբը եւ ընդդիմությունը նույնպես չեն կարողանում կիսել «իրենց հայրենիքը»: Քանի որ երկուսն էլ իրավազոր չեն եւ չեն լինելու այնքան ժամանակ, մինչեւ որ Ադրբեջան չվերադառնան բռնատեղահանված հայերը, ռուսները, մինչեւ ավտոխտոն լեզգիները, ավարները, թալիշները, թաթերը, մյուս էթնիկ փոքրամասնությունները չունենան իշխանություն ձեւավորելու ազատ հնարավորություն:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

# Հավասարության չափանիշները օսմանյան ժամանակաշրջանում

**Թուրքական «Թարաֆ» թերթի հոդվածագիր Սերդար Գայան, որը պարբերաբար ստորագրում է հայերի իրավունքները պաշտպանող հոդվածներ, այս անգամ, ըստ Կահիրեում լույս տեսնող «Արեւ» եռօրյայի, հրապարակել է «Դեպի ցեղասպանություն տանող ճանապարհը» խորագրով հոդվածաշարի առաջինը, որտեղ, ցեղասպանության մասին ուղղակիորեն չխոսելով, անդրադառնում է մի նյութի, որի մասին հազվադեպ է խոսվում: Նա պնդում է, որ ճիշտ չէ խոսել այն մասին, որ Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում իսլամներն ու ոչ իսլամ փոքրամասնությունները միասնաբար ապրում էին «ամբողջական անդորրության» պայմաններում:**

**«Արեւը» հետեւյալ հատվածներն է տպագրել այդ հոդվածից.**

**«Այդ պնդումը ճիշտ չէ, որովհետեւ այդ ժամանակաշրջանում իսլամներն ու ոչ իսլամները ապրում էին ոչ թե միասին, այլ կողք կողքի: Ոչ իսլամներն իրենց թաղամասերում անգամ ազատություններ չունեին: Օրինակ, նրանք իրենց եկեղեցիների զանգերը չէին կարող հնչեցնել: Նաեւ նրանց տները ավելի ցածր պետք է լինեին, քան իսլամների տները, իսկ պատուհաններն էլ չպետք է նայեին իսլամների տներին: Սրանք պատճառներ էին, որ ոչ իսլամները համարվեին երկրորդ կարգի բնակիչներ»:**

**«Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որոշ շրջաններում այս սահմանափակումները շատ ավելի խստացված էին: Սելիմ Գ սուլթանի ժամանակ, օրինակ, ոչ իսլամների տները պետք է սեւ ներկված լինեին, որպեսզի տարբերվեին իսլամների տներից»:**

**«Կարեւոր է նաեւ հագուստի կանոնադրությունը, որ 1500-ական թվականներին էր գործադրվում: Ոչ իսլամներին արգելվել էր «սարըք» (փաթթոց) կրել, հակառակ որ նրանք էլ հնուց ի վեր իրենց գլուխները փաթթոցով էին ծածկում. նաեւ արգելվել էր նրանց կրել մետաքսից կամ այլ թանկարժեք կերպասներից պատրաստված հագուստներ: Սուլթանի հրահանգով ճշտվել էր նաեւ, թե որ խմբի մարդիկ ինչ գույն հագուստ կամ կոշիկ իրավունք ունեն կրելու: Այս բոլորը գալիս են ապացուցելու, որ իսլամներն ու ոչ իսլամները կողք կողքի էին ապրում, բայց ոչ միասին», եզրակացնում է Սերդար Գայան:**

Հ. Ծ.

# Ռեկտորը պարզաբանում է, դասախոսները պահանջում են ռեկտորի հրաժարականը

*1-ին էջից*

Նամակը կուղարկենք ԿԳ նախարար Արմեն Աշոտյանին եւ, ամենայն հավանականությամբ, նամակում կխնդրենք դիտարկել Արա Ավետիսյանի պաշտոնում մնալու նպատակահարմարությունը»:

Դասախոսների հավաստիացմամբ՝ անձնավորված խնդիր չկա, սա հատուկ Արա Ավետիսյանի անձի դեմ ուղղված ակցիա չէ, պարզապես համալսարանը քայքայման շեմին է: «Թե որքան կտեւի նման քաղաքականությունը, չեմ կարող ասել, սակայն մի բան է հստակ՝ երկու օր առաջ տեղի ունեցած նիստի ժամանակ բոլոր ելույթներ ունեցողները լիարժեքորեն բացասական էին արտահայտվում ռեկտորի կողմից տարվող քաղաքականության դեմ», ասաց Խաչատրյանը:

Ռեկտոր Արա Ավետիսյանը կատարվածի վերաբերյալ այլ մեկնաբանություն ունի. համալսարանում ով որքան աշխատի, այնքան էլ աշխատավարձ կստանա: Այն, ինչ վերջին 2 տարվա ընթացքում կատարվում է համալսարանում, ըստ ռեկտորի, կոչվում է աշխատանքի արդյունավետ կազմակերպում:



«Պակաս միջոցների պարագայում, արդյունավետ կազմակերպման հարցը դարձել է ամենօրյա խնդիր: Բուհը պետք է իր առաքելությունն իրականացնի, պետք է կարողանա լրջորեն հաշվել ամեն մի դրամի նպատակային, արդյունավետ ծախսը: Բուհում վերջին տարիներին ֆինանսական մուտքերը նվազել են: Դա կապված է ընդունվածների թվի, հասարակության սոցիալ-տնտեսական վաս վիճակի, տեխնիկական եւ բնագիտական մասնագիտությունների ցածր պահանջարկի հետ», ասաց ռեկտորը՝ հավելելով, որ հենց այս խնդիրներից ելնելով պետք է կարողանան եկամուտները ճիշտ բաշխել ու պրոֆեսորադասախոսական աշխատակազմի վճարումը կազմակերպել: «Վարձատրության նոր համակարգին անցնելու հետ կապված անհամաձայնություն առաջացավ: Որոշ մասը ասում է՝ լավ է, որ անցնում ենք ըստ աշխատանքի ճշգրիտ վարձատրման ձեւին, սակայն համաձայն չենք, որ մեր աշխատավարձը կրճատվի», ասաց Ավետիսյանը՝ հավելելով, որ համալսարանի յուրաքանչյուր տարվա ուսումնական պլանը կազմվում է համաձայն ուսանողների թվի:

«Յուրաքանչյուր տարին ունի պարտադիր ժամաքանակ, ինչը փոփոխելի չէ: Դասախոսները դասախոսություն են կարդում, գործնական ժամեր անում, լաբորատոր աշխատանքներ եւ ավարտական աշխատանքներ ղեկավարում: Ըստ ծրագրերի՝ յուրաքանչյուր թեմային հատկացվում են ժամեր եւ սահմանվում է՝ որքան դասախոսության դեպքում քանի ստուգարք, քննություն եւ կոնսուլտացիա են անցկացվում եւ ժամաքանակի համապատասխան սահմանվում են վճարները: Տարբեր բուհեր այս ժամերին տարբեր վճարներ են սահմանում: Մենք էլ որոշեցինք տարբերակում դնել՝ դասախոսության ժամն ավելի շատ պետք է արժենա, քան կոնսուլտացիայի ժամը, նույն սկզբունքն է նաեւ գործնականի եւ ստուգարքի դեպքում: Որոշեցինք ժամարժեքներ սահմանել՝ ըստ եղած գումարների եւ ծանրաբեռնվածության, ստացանք միջին թիվ, որը հաշվարկի սկզբնակետ է, պրոֆեսորի դասախոսությունը մի գումար է, դոցենտինը՝ մի գումար: Նախորդ տարի շատ բարձր աշխատավարձեր էինք տվել, իսկ այս տարբերակումներ մտցնելուց զգալիորեն ցածրացել են աշխատավարձերը: Լսարանային ժամերի վճարը բարձրացել է, ոչ լսարանայինը՝ ցածրացել: Իսկ կոնկրետ մարդկանց համար տարբերություններ են տվել՝ կախված իրենց պարապած ժամերից»:

Ըստ Ավետիսյանի՝ եթե լսարանային ժամերի համամասնությունը ճիշտ պահեին ամբիոններում, ապա աշխատավարձերը պետք է պակասեին 6000-10000 դրամով: Ըստ ռեկտորի՝ շեղումներն ունեն մեկ օբյեկտիվ պատճառ՝ ֆինանսական մուտքերը համալսարանում պակասել են: Ռեկտորի մեկնաբանությամբ՝ համալսարանում կրճատված հաստիքները նորմատիվային են: «Պետք է կրճատվեր 53 լաբորանտական, 107 պրոֆեսորադասախոսական հաստիք: Ամբիոններին ասվել է՝ սա ձեր հաստիքներն են, քանի հոգով ուզում եք դա պարապեք: Լաբորանտներից նախատեսված թվից ավելի քչերն են ազատվել՝ միայն նրանք, ովքեր մասնագիտական կրթություն չունեին»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

zori.qxd 11/10/2013 20:57 Page 1



## Բաց նամակ

# ՂԱՐԱԲԱՂԻ ԽՆԴԻՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐՆ Է

*Ռուսաստանի Դաշնության նախագահ պարոն Վ. Վ. ՊՈՒՏԻՆԻՆ*

*1-ին էջից*

Վլադիմիր Վլադիմիրովիչ, հավատացե՛ք, այն, ինչի վրա ուշադրություն է դարձրել Անատոլի Ալեքսանդրովիչը, չափազանց լուրջ է եւ, ես կասեի՝ չափազանց պատմական: Բայց նախ երկու խոսք այն մասին, թե ինչպես եւ ինչու Սոբչակը ձեռք զարկեց այդ թեմային: ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարի ընթացքում Անատոլի Ալեքսանդրովիչը տեղեկացավ, որ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունից, որը հենց հայկական էր արդեն իսկ այն պատճառով, որ կոչվում էր «ինքնավար», ոչ մի հայ չէր ընտրվել ժողովրդական պատգամավոր, եւ այդ փաստը համարում էր անհեթեթություն: Արդեն ինքը, ընտրված լինելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Օրենսդիր կոմիտեի կազմում, համագումարի ամբիոնից հանդես եկավ առաջարկությամբ՝ ինձ տալու իր տեղը միայն նրա համար, որ ղարաբաղյան փոքրիկ պատգամավորությունից եւս մեկ ներկայացուցիչ կարողանար մշտապես աշխատել Գերագույն խորհրդում: Այս ամենի, ինչպեսեւ Սոբչակի ելույթի մասին կարելի է կարդալ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարի կարմիր կաշեկազմ սղագրական հատորում: Նրա գաղափարին հավանություն տվեցին շատերը, այդ թվում եւ ակադեմիկոս Սախարովը:

Ե՛վ Սոբչակը, ե՛ւ Սախարովը ուշադիր, գիտնականների պես, ինչպես ասում են՝ մատիտը ձեռքին ուսումնասիրել են Գյուլիստանի (1813) եւ Թուրքմենչայի (1828) դաշնագրությունները: Խոսքն առաջին հերթին այն մասին է, որ Մոսկվայի (1921 թվականի մարտ) եւ Կարսի (1921 թվականի հոկտեմբեր) պայմանագրերի արդյունքում այն տարածքը, որի մեծ մասի վրա կազմավորվեց բացարձակ նոր, ըստ էության թուրքական հանրապետություն, պատմականորեն պատկանում էր Հայաստանին: 1639 թվականից այն անցել էր Իրանին, իսկ 1813 թվականի Գյուլիստանի պայմանագրից հետո Պարսկաստանից անցավ Ռուսաստանի կազմ: Ընդ որում, պահպանվեցին բոլոր հայկական եկեղեցիները, պատմության եւ մշակույթի հուշարձանները:

Նորագույն պատմության մեջ ռուսաստանյան ղեկավարներից Դուք թերեւս առաջինն էիք, ով, եթե հիշողությունս չի դավաճանում, 2006 թվականին բարձրաձայնեց պատմական ճշմարտությունը գործուն կերպով պաշտպանելու անհրաժեշտության մասին: Որպես Ձեր ծրագրի շարունակություն, արդեն նախագահ Դմիտրի Մեդվեդեւի օրոք ստեղծվեց «ի վնաս Ռուսաստանի պատմության նենգափոխման ավելի ու ավելի ագրեսիվ փորձերի» հակազդման հատուկ հանձնաժողով: Թվում էր, թե այդ անհրաժեշտ եւ կարեւոր գործը տեղից շարժվեց: Սակայն շուտով ռուսական հասարակայնության, ինչպես ասում են՝ որոշակի մասը գաղափարն ընդունեց եթե ոչ սվիններով, ապա, մեղմ ասած՝ քննադատաբար: Պատճառը, իմ խորին համոզմամբ, այն էր, որ պատմական ճշմարտության վերաբերյալ այն ժամանակվա նյութերում եւ բանավեճերում կային շատ ընդհանուր, ավելի ճիշտ՝ ընդհանրացված, հետեւաբար եւ վերացական բաներ: Տպավորություն էր ստեղծվում, թե մոռացության է մատնվում նման դեպքերի համար ամենագլխավորը՝ «Ճշմարտությունը կոնկրետ է» արիստոտելյան փիլիսոփայական բանաձեւը:

Ինչպիսին էլ որ լինի ճշմարտությունը (վտանգավոր, վնասակար, սարսափելի), այն պետք է ընդունվի այնպիսին, ինչպիսին կա: Գյոթեն, օրինակ, «գերադասում էր վնասակար ճշմարտությունը օգտակար սխալից»: Եվ երբ Անատոլի Սոբչակը խոսում էր Գորբաչովի դժբախտության եւ ողբերգության մասին, ապա նկատի ուներ հենց պատմական ճշմարտության աղճատումը: Մեծագույն պետության եւ հզոր կուսակցության ղեկավարը պատկերացում չուներ այն մասին, թե որոնք էին իր պատմական հայրենիքի՝ Ռուսաստանի իրական սահմանները: Չգիտեր այն մասին, որ հեղափոխական աղմուկի տակ Ստալինի եւ Աթաթուրքի կողմից ստեղծված, էությամբ թուրքական Ադրբեջան հանրապետությունը, կրկնում եմ, մեծամասամբ տեղակայված է պատմական Հայաստանի տարածքում, որը Գյուլիստանի եւ Թուրքմենչայի դաշնագրերից հետո ներառված էր Ռուսաստանի կազմում: Իսկ Ելցինը՝ ավելի վատթար. ո՛չ Բելովեժյեում, ո՛չ Կրեմլում, ո՛չ մահվան մահճում այդպես էլ չհասկացավ, որ 1991 թվականին բոլորովին էլ Ռուսաստանի նախագահ չէր դարձել: Նա ՌՍԴԽՀ նախագահն էր, իր կետագծված ու պայմանական խորհրդային սահմաններով: Դուք ինքներդ մի անգամ Ձեր ելույթում հստակ



***Վասիլի Երանելու տաճարը, Մոսկվա, Կարմիր հրապարակ, 16-րդ դ.***

նշեցիք. «Ռուսաստանն, ըստ էության, վերանվանվել էր ԽՍՀՄ-ի, բայց դա չի նշանակում, թե դադարել էր Ռուսաստան լինելուց»:

Այսպիսին է ճշմարտությունը, որը վերացական չէ: Այն կոնկրետ է: Շոշափելի է: Տվյալ դեպքում կարելի է նույնիսկ ձեռքով դիպչել նրան: Դա Գյուլիստանի պայմանագիրն է, որը ներկայացնում է իննամյա պատերազմի հանրագումարը: Նրա տասնմեկ հոդվածներում ամփոփված է երկու պետությունների՝ Ռուսաստանի եւ Պարսկաստանի ողջ աշխարհաքաղաքական սկզբունքը, որոնք մարգարեաբար գիտակցում էին, որ իրենց միջեւ «հավերժական խաղաղությունը, բարեկամությունը եւ բարեհաշտությունը» կարող են գոյատեւել բացառապես պատմական փաստաթղթի տառի եւ ոգու երաշխավորված իրագործման դեպքում: Այնտեղ ընդգծվում է գուցե ամենագլխավորը՝ համաձայնագրի խստիվ կատարման պատասխանատվությունը կրում են Ռուսաստանի եւ Պարսկաստանի ոչ միայն գործող ղեկավարները, այլեւ, ինչը ավելի կարեւոր է, «ժառանգորդներն (!-Զ.Բ.) ու հաջորդողները (!-Զ.Բ.)»:

Վլադիմիր Վլադիմիրովիչ, խոշոր հաշվով դա այսօր վերաբերում է նաեւ անձամբ Ձեզ: Այդ կապակցությամբ հրատապ, եթե չասենք՝ օպերատիվ անհրաժեշտություն կա հրապարակելու, օրինակ, դաշնագրի երրորդ եւ չորրորդ հոդվածները, առանձնապես եթե հաշվի առնենք, որ ներկայիս (ռուս, ռուսաստանցի) լայն ընթերցողը ծանոթ չէ դրանց. **«Հոդ. III: Նորին Շահական մեծությունը, ի ապացույց Նորին Մեծություն Ամենայն Ռուսիո Տիրակալի հանդեպ իր անկեղծ բարեկամության, սույնով հանդիսավորապես ընդունում է, ինչպես իր, այնպես էլ Պարսից գահի Բարձր Հաջորդների անունից, որ Ռուսական կայսրության սեփականությանն են պատկանում ներքոնշյալ խանությունները՝ Ղարաբաղի, Շիրվանի, Դերբենտի, Կուբիի, Բաքվի եւ Թալիշի խանությունը իր այն հողերով, որոնք ներկայումս գտնվում են Ռուսական կայսրության իշխանության տակ...»** (գործնականում ամբողջը, չհաշված ներկայիս Ադրբեջանի տարածքը, որը թուրքերն ստեղծեցին Մոսկվայում եւ Կարսում): **«Հոդ. IV: Նորին Մեծություն Ամենայն Ռուսիո Տիրակալը, փոխադարձ կապվածություն ցուցաբերելով Նորին Մեծություն Պարսից Շահին եւ ի ապացույց իր անկեղծ ցանկության՝ Պարսկաստանում, Իրեն հարեւան պետությունում ամուր հիմքերի վրա տեսնելու ինքնակալությունը եւ պետական իշխանությունը, սույնով հանդիսավորապես խոստանում է Իր եւ Իր Հաջորդների անունից (!-Զ.Բ.). Պարսից շահի որդիներից նրան, ում ինքը կնշանակի Պարսկական պետության Ժառանգորդ, անհրաժեշտության դեպքում ցուցաբերել օգնություն, որպեսզի Ռուսիո Բարձրագույն Արքունիքի օգնությամբ ամրապնդվի Պարսից Արքունիքը...»**: Ընդգծեմ, որ «Բարձր հաջորդներ» եւ «հավերժական ժամանակներ» բառակապակցությունները դաշնագրում ներկա են ոչ թե որպես դիվանագիտական սիրախաղ կամ մի ինչ-որ անթաքույց մաքիավելիզմ, այլ ապագայի, սերունդների հանդեպ պատասխանատվության արտահայտություն:

Այնպես որ, Վլադիմիր Վլադիմիրովիչ, ստացվում է, որ ես Ձեզ դիմում եմ, բացի ամենայնից, նաեւ որպես հենց իր՝ Ալեքսանդր Առաջինի ե՛ւ Ժառանգորդի, ե՛ւ Հաջորդի: Եկեք հիշենք պատմությունը. 1812 թվական (մեկ տարի անց կնքվելու է Գյուլիստանի պայմանագիրը): Վառվում էր Մոսկվան: Նապոլեոնը գտնվում էր Կրեմլում: Իսկ Նորին Մեծությունը պնդում էր, որպեսզի «Ղարաբաղյան ճակատից ոչ մի զինվոր ետ չկանչվի»: Դիմում եմ Ձեզ, հիանալի գիտակցելով այն բուն «պատմական ճշմարտության» իմաստն ու էությունը, որի մասին Դուք խոսեցիք 2000 թվականի կեսերին, երբ շնորհիվ Ձեր ջանքերի աճեց (վերականգնվեց) ռուսական բանակի հզորությունը՝ մղձավանջային իննսունականներին հոգեվարք ապրելուց հետո: Ալեքսանդր Առաջինի համար պատմական ճշմարտությունը առավել քան շոշափելի-կոնկրետ էր: Քանզի նա լավ գիտեր այն մեծ, յուրօրինակորեն ռազմավարական եւ նույնիսկ մարգարեական նամակագրության մասին, որ սկսվել էր Ալեքսեյ Միխայլովիչ ցարի եւ ղարաբաղյան մելիքների (իշխանների) ժամանակներից: Հիշում եմ, մեծարգո Վլադիմիր Վլադիմիրովիչ, թե ինչպես Դուք, արդեն որպես Ռուսաստանի նախագահ Հայաստան կատարած Ձեր առաջին պաշտոնական այցի ժամանակ, Երեւանի պետական համալսարանի դահլիճում մեջբերում կատարեցիք Պետրոս Մեծից, Ձեր կողմից հավելելով. «Ասված է՝ արված է»: Բառերը, որ մեջբերեցիք, Պետրոս Առաջինը գրել էր 1724 թվականի նոյեմբերի 10-ին, երբ ղարաբաղյան կոնկրետ հոգեւոր, ռազմական առաջնորդներին եւ կառավարիչներին ցուցաբերել էր «կայսերական բարեհաճություն եւ շնորհավորանք ողջ հայ ժողովրդին»: Քանզի այն ժամանակներում (եւ առհասարակ մինչեւ Հոկտեմբերյան հեղափոխությունը) պատմական անհեթեթություն էր Ղարաբաղը դիտարկել Հայաստանից անջատ:

Տասնյոթերորդ եւ տասնութերորդ դարերում ռուսական ցարերի հանդիպումների եւ նամակագրությունների ռազմավարությունը ուղղված էր խորապես մտածված, հստակ հաշվարկված պատմական հեռանկարին: Գեներալ-ֆելդմարշալ Գրիգորի Պոտյոմկինը կայսրուհի Եկատերինա Երկրորդին Ղարաբաղից գրած իր ուղերձում համառորեն խնդրում էր «**կիրառել բոլոր ջանքերը, որպեսզի Ղարաբաղը կարգավորվի հայ ժողովրդի համար առավել շահեկան կերպով**»: Խոսքն, իհարկե, այն նույն հարավային ուղղության ռազմավարական կարեւորության մասին էր: Եկատերինա Մեծը պարտավորեցրեց, որպեսզի «Հայ քրիստոնեական ժողովրդի» հանդեպ առանձնահատուկ բարեմիտ վերաբերմունքը էստաֆետի պես մեկ ցարի ձեռքից փոխանցվի հաջորդին: XVIII դարի ավարտին, իննամյա պատերազմն սկսվելուց ոչ շատ առաջ Պավել Առաջինը իր կայսերական բարեմտությունն ու ողորմածությունը արտահայտեց «**վեհապետական եւ հռչակավոր Ղարաբաղյան մարզին**», որի անառիկ բարձունքներում, ռուս ականավոր պոետ եւ հումանիստ Սերգեյ Գորոդեցկու բառերով, «**ավելի քան երկու հազար տարվա ընթացքում հայ ժողովուրդը դիմակայել է քոչվոր ցեղերի ոտնձգություններին, պահպանելով իր մշակույթը, պաշտպանելով իր ազգային դեմքը**»:

Եկատերինա Երկրորդի օրհնությամբ հրատարակվեց այն ժամանակների համար աննախադեպ հայ-ռուսերեն ծանրակշիռ բառարանը: Դա 1787 թվականին էր: Ահա թե ինչպիսի կենսական անհրաժեշտություն գոյություն ուներ դեռեւս շատ առաջ, քան Արեւելահայաստանը վերջնականապես կմիավորվեր Ռուսաստանի հետ: Ի դեպ, Թուրքմենչայի պայմանագրից շատ չանցած, 1837 թվականին հենց իր՝ Նիկոլայ Առաջինի ներածական խոսքով հրատարակվեց նորացված բառարանը: Իսկ դրանից էլ առաջ, Ալեքսանդր Առաջինի օրոք Մոսկվայում բացվեց հայկական համալսարան: Մի խոսքով, Գյուլիստանի եւ դրա օրգանական շարունակությունը կազմող Թուրքմենչայի պայմանագրերն ըստ էության դարձան ոչ միայն ռուսների եւ հայերի համար պատմական օրինաչափության, պատմական ճշմարտության մարմնավորում, այլեւ պարսիկների համար, որոնք Արաքսից եւ Քռից դեպի հյուսիս ընկած տարածքներում միշտ խնդիրներ էին ունեցել հիմնականում թուրքական ցեղերի հետ:

Թող ներկայիս սերնդի, առանձնապես երիտասարդության մոտ այն տպավորությունը չստեղծվի, թե Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ եղբայրական հարաբերությունները սկսվեցին այդ երկու պատմական փաստաթղթերի ընդունումից հետո: Կարծում եմ, չի խանգարի մի քանի պատմական նրբագծեր ավելացնել մեր փոխհարաբերությունների «դիմանկարին»:

...Բյուզանդիայի կայսր Վասիլ (Բարսեղ) Երկրորդը (ազգությամբ հայ) լավ իմանալով, որ Նովգորոդի եւ Կիեւի իշխան Վլադիմիր Սվյատոսլավովիչի (Վլադիմիր Առաջինի) տատիկը՝ իշխանուհի Օլգան Ռուսաստանում առաջինն էր քրիստոնեություն ընդունել, համաձայնվեց իր քրոջը՝ բյուզանդական արքայադուստր Աննային կնության տալ Վլադիմիրին: Այնպես որ, ռուսական փրկիչ Ուղղափառության ակունքներում կանգնած էին հայերը: Ինչպես ասում են՝ բարեկամացած էին ընտանիքներով եւ պետություններով: Այդ ժամանակներից պետք է անցներ հազար տարի, որպեսզի մեծ մարտիրոս Տիխոնը, ինչպեսեւ բոլշեւիկյան մղձավանջներից հետո Ռուս եկեղեցու վերածնունդը տեսած Ամենայն Ռուսիո պատրիարքներ Ալեքսիյ Երկրորդը եւ Կիրիլ Առաջինը, ասես պայմանավորված, արտասանեին համարյա միեւնույն բանը Հայ առաքելական եկեղեցու մասին. «**Մենք պաս-**

*Տես էջ 5*

zori.qxd 11/10/2013 20:57 Page 2



# Բաց նամակ

*4-րդ էջից*

**կանում ենք ուղղափառ ժողովուրդների նույն ընտանիքին, որոնք աստիճանաբար վերադառնում են քրիստոնեական հավատի գիրկը, բարոյականության ակունքներին**»:

Բոլոր ժամանակներում հայերը Ռուսաստանում ներկայացված էին ոչ միայն առեւտրի, գործարարության, շինարարության, այլեւ բժշկության, գեղանկարչության, ճարտարապետության, մշակույթի ոլորտներում (կարդացեք Վ.Վ.Ստասովին): Դեռեւս Ուղղափառ Ռուսաստանի կազմավորման արշալույսին հայերը ռուսերենից թարգմանել էին «Վարք Բորիսի եւ Գլեբի» եւ նույն ժամանակ էլ հայերենից ռուսերեն՝ «Վարք Գրիգոր Լուսավորչի» եւ «Վարք երանելի կույսերի» (խոսքը Հռիփսիմե եւ Գայանե սրբերի մասին է):

Ռուսական պատմության հայր Ն.Մ.Կարամզինը իր «Ռուսական պետության պատմություն» բազմահատորյակում գրում է. **«Դեռեւս Մոնոմախի ժամանակներում** (իսկ դա XI-XII դարերն էին) **Կիեւում փառաբանված էին հայ բժիշկները...»**, եւ նշում է հետաքրքրական մանրամասն. «Նրանցից մեկը (ինչպես գրում են), նայելով հիվանդին, միշտ գուշակում էր՝ կարո՞ղ է նա ապրել, եւ հակառակ դեպքում սովորաբար կանխատեսում էր նրա մահվան օրը»:

Գիտե՞ք, մեծարգո Վլադիմիր Վլադիմիրովիչ, թե ինչի մասին էի ես հաճախ մտածում ղարաբաղյան խառնակ տարիներին: Այն մասին, որ Նորին Կայսերական Մեծություն, Պայծառափայլ եւ Հզորագույն Մեծն Կայսր Տիրակալ եւ Ամենայն Ռուսիո Ինքնակալ Ալեքսանդր Առաջինը կշրջվեր գերեզմանում, իմանալով, որ ադրբեջանցիները թուրք ռազմածովային մասնագետների օգնությամբ խորհրդային (ռուսական) նավերից ապամոնտաժել են հեռահար հրանոթները, դրանք տեղադրել Շուշիի եւ Լաչինի, Աղդամի եւ Խոջալուի կրակակետերում եւ թիրախային զարկեր էին տեղում հայկական գյուղերի, Ղարաբաղի քրիստոնեական հուշարձանների, «Գյուլիստան-Ռուսաստան ճամբարի Ղարաբաղյան տիրույթի բնասահմանի վրա» (ներկայիս Շահումյանի շրջանը), որտեղ Ռուսաստանը եւ Պարսկաստանը պայմանագիր ստորագրեցին հավերժական ժամանակների համար:

Կարեւոր մանրամասն. Ալեքսանդր Առաջինի կողմից ստորագրված Գյուլիստանի դաշնագրում հստակ որոշված է Կասպից ծովի ճակատագիրը «բոլոր ժամանակներում»: Տերը մեկն էր՝ Ռուսաստանը: Կարո՞ղ եք պատկերացնել, որ նման լուծումը ձեռնտու էր նաեւ Իրանին: Ներկայացնեմ հատված դաշնագրի **V հոդվածից. «Իսկ ռազմանավերի առումով, ինչպեսեւ նախկինում պատերազմի ժամանակ, այնպես էլ խաղաղության ժամանակ եւ միշտ (!-Զ.Բ.), երբ Ռուսական ռազմական դրոշը միակն էր** (!-Զ.Բ.), **որ գոյություն ուներ Կասպից ծովում, ապա սույն հարգանքով այժմ էլ նրան է վերապահվում նախկին իրավունքը, որպեսզի բացի Ռուսիո Տերությունից ոչ մի այլ տերություն Կասպից ծովում չունենա ռազմական դրոշ**»: Ինչպես տեսնում ենք, Կասպից ծովը պատերազմից առաջ էլ պատկանել է Ռուսաստանին: Հիմա Կասպից ծովում ծածանվում են հինգ դրոշներ: Պարսկաստանը, որ ինը տարի կռվել էր Ռուսաստանի հետ, «անկեղծ ցանկություն ունենալով վերջ դնել պատերազմի աղետներին» եւ ցանկանալով «ամուր հիմքի վրա վերականգնել հաստատուն խաղաղություն», համաձայնվեց մեն-միակ դրոշին՝ Ռուսաստանի դրոշին: Իսկ հիմա, չգիտես որտեղից, մի ողջ ոհմակ հայտնվեց: Ընդ որում, կասկած չկա, որ այսօր Իրանին ամենից շատ անհանգստացնում է հենց ադրբեջանական դրոշը: Եվ որպեսզի արդարացնի, ավելի ճիշտ՝ օրինականացնի Կասպից ծովում դրոշ ունենալու իրավունքը, Ադրբեջանը սկսում է թափով հորինել եւ ապա հնացնել իր պատմությունը:

Հայտնի է, որ ԽՍՀՄ կազմավորման առաջին իսկ օրերից սահմանները համարվում էին պայմանական, այսպես ասած, խորհրդային, այն էլ՝ հավերժական ժամանակներով: Բացի դրանից, ժամանակ առ ժամանակ ձեռքից ձեռք էին հանձնվում պատմական ողջ տարածքներ, որոնք հանդիսացել էին այս կամ այն ժողովրդի հայրենիքի մաս: Համարվում էր, թե իբր այդպես էր պետք ընդհանուր երկրին, այդպես էր պետք խորհրդային ժողովրդին, որն արդեն ստացել էր իր բնորոշումը՝ «Նոր պատմական հանրություն-խորհրդային ժողովուրդ»: Ինչպե՞ս այստեղ չմտաբերես Սոլժենիցինին. «**Իսկ չէ՞ որ այն տարիներին համարում էին, թե բոլորովին էլ կարեւոր չէ որտեղ անցկացնել սահմանները, մի քիչ էլ կանցնի, եւ ուր որ է բոլոր ազգերը կմիաձուլվեն մեկի: Խորաթափանց Իլյիչ-առաջինը սահմանների հարցը անվանում էր նույնիսկ տասներորդական: Այդպես Ղարաբաղը հատելով տվեցին Ադրբեջանին: Ի՞նչ տարբերություն, թե որտեղ: Այդ պահին պետք էր հաճոյանալ**



*Ամարասի վանք, Լեռնային Ղարաբաղ, Մարտունու շրջան, 4-րդ դար*

**Սովետների սրտալի բարեկամ Թուրքիային**»: Իսկ չէ՞ որ Ալեքսանդր Իսաեւիչը կարող էր որպես օրինակ բերել նաեւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունը եւ ահռելի ու բազմաշրջան Գարդմանքը (Ելիզավետպոլի գավառի մի մասը): Եվ ոչ միայն դրանք...

Այդ ամենը, սկսած 1813 թվականից, գտնվում էր Ռուսաստանի կազմում: Եվ այդ ողջ տարածքի վրա, ներառյալ թալիշների, քրդերի, թաթերի, բուդուխների, խրիզների, խինալուգների եւ այլ ազգերի ու ազգությունների պատմական հողերը, ստեղծվեց ըստ էության միասնական թուրքական Ադրբեջան հանրապետությունը, որտեղ այդ բոլոր եւ այլ մահմեդական ժողովուրդներ, որոնք դարերով ապրել էին իրենց հայրենիքում, բռնի կերպով ուծացվեցին, մանավանդ՝ Ալիեւ ավագի կառավարման տարիներին:

Իսկ ի՞նչ կատարվեց այն տարածքում, որն աշխարհագրական ամենայն մանրամասնություններով ու մանրուքներով նշված է Գյուլիստանի եւ Թուրքմենչայի դաշնագրերում: Ինչպե՞ս այդ տարածքում հայտնվեց միութենական հանրապետություն, որն Աթաթուրքն առաջարկեց կոչել «Ադրբեջանի թուրքական հանրապետություն»: Այդ անվանումը չստացվեց: Փոխարենը, 1974 թվականի աշնանը, ավերելով եւ զավթելով Կիպրոսի տարածքի քառասուն տոկոսը, ի հիշատակ Աթաթուրքի երազանքի, այն անվանեցին «Կիպրոսի Թուրքական հանրապետություն»:

Եվս մեկ կրկնություն. գործնականում ողջ Հարավային Կովկասը պաշտոնապես գտնվում էր Ռուսաստանի կազմում: Այնպես որ, ճիշտ էր Ա. Սոբչակը. հրոք, չկա Ղարաբաղի խնդիր, կա Ռուսաստանի խնդիր: Կարելի է, իհարկե, դեմագոգաբար բարբառել, թե իբր, գիտե՞ք, 1917 թվականին իշխանությունը փոխվեց, եւ Ռուսաստանի նոր ղեկավարությունն իր հարցերը լուծում էր ուզածի պես: Այդ դեպքում ի՞նչ պատասխան տալ այն հարցին, թե որտեղի՞ց ծլեց Ադրբեջանը: Խոսքը տարբեր ազգերից ու ազգություններից բաղկացած կոնկրետ բնակչության մասին չէ, որն այն ժամանակ ապրում էր այդ տարածքում, այլ արհեստականորեն ստեղծված «նոր» ժողովրդի մասին է: Չէ՞ որ ո՛չ Գյուլիստանի պայմանագրից առաջ, ո՛չ էլ դրանից հետո գոյություն չուներ ո՛չ այդպիսի ժողովուրդ, ո՛չ այդպիսի երկիր: Սա իմանալը շատ կարեւոր է:

Ես կարծում եմ, Վլադիմիր Վլադիմիրովիչ, Ձեզ համար դժվար չի լինի գտնել Յուժակովի տասնվեց հատորանոց հանրագիտարանը (1904 թվականի) եւ տեսնել «Ազերբայջան» տերմինը, որի դիմաց գրված է՝ «ծայրագավառ Պարսկաստանի հյուսիսում»: Այնտեղ կա Պարսկաստանի քարտեզը: «Ազերբայջան» բառը գրված է ոչ այնտեղ, որտեղ այսօր նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ն է, այլ Քուռ գետի աջ ափից ավելի ներքեւ: Դրանից հյուսիս կա Ղարաբաղ, կա Թալիշ, կա Շիրվան, իսկ Ազերբայջան չկա: Հյուսիսային մասում մի քանի ծայրագավառներ են (այդպես էլ գրված է՝ «ծայրագավառ»): Դրանցից մեկն էլ Ազերբայջանն է (Ադերբեյջան): Ընդամենը 36 կարճ տող: Վերջին ինը տողերում խոսվում է բնակչության մասին. «Հյուսիսում՝ թուրքեր են եւ քրդեր»: Երկու տողից հետո նշվում է. «Թուրքերը եւ քրդերը վարում են քոչվորական ապրելաձեւ»: Եվս երկու տողից հետո ընդգծվում է, որ «քրդերը ցածրադիր վայրերում զբաղվում են հողագործությամբ»: Դա նշանակում է, որ թուրքերը, որոնք որոշ ժամանակ անց կոչվեցին ադրբեջանցիներ, վարում էին միայն քոչվորական ապրելաձեւ: Հիշեցնենք, սա տպագրված է 1904 թվականին:

Հարկ է հիշել եւ այն մասին, որ այդ ամբողջ աշխարհագրությունը գտնվել ու հիմա էլ գտնվում է (այդ նույն թուրքերի ու քրդերի ժառանգների հետ միասին) Արաքսի ու Քռի աջ ափերից դեպի հարավ, այսինքն՝ Ռուսաստանի սահմաններից դեպի հարավ, Իրանի տարածքում: Իսկ Ադրբեջանի խորհրդային հանրապետությունը ստեղծեցին, ինչպես արդեն ասել եմ, դեպի ավելի հյուսիս, հիմնականում հայկական պատմական տարածքում, որը մտնում էր Ռուսաստանի կազմի մեջ: Կարծում եմ, չկա ավելի անհեթեթ, եթե չասենք՝ վտանգավոր բան, քան թույլ տալ քաղաքական գործիչներին չարաշահել «կատարված փաստի» չարաբաստիկ սինդրոմը: Իբր, գնացքն արդեն մեկնել է: Այդ դեպքում ինչպե՞ս վարվել «պատմական ճշմարտության» հետ, «ի վնաս Ռուսաստանի՝ պատմությունը նենգափոխելու ագրեսիվ փորձերի» դեմ պայքարի հետ: Ճիշտ է, մեր դեպքում խոսքը ոչ միայն պատմության նենգափոխման մասին է, այլեւ ուրիշի հայրենիքը նենգորեն ու բարբարոսաբար զավթելու մասին: Եկեք հիշենք 1921 թվականի Մոսկովյան պայմանագրի նախօրեն: Ընդամենը մեկ օրինակ՝ հրեշավոր իր էությամբ:

Հոգեվարքի մեջ գտնվող Թուրքիան, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կորցրած ամեն ինչ, կորցրած կայսրության կարգավիճակը, բայց շահադիտաբար առաջինը ճանաչելով խորհրդային իշխանությունը, պատվիրակություն է ուղարկում Մոսկվա՝ բոլշեւիկների հետ բանակցելու: Գործընթացը ղեկավարում էր ազգությունների ժողկոմ Ստալինը: Պակտը ստորագրեցին մարտի 16-ին: Իսկ մարտի 4-ին «Ազգությունների կյանքը» պարբերականում Ստալինի տեղակալ Ա.Սաչկոն իր շեֆի թելադրանքով գրեց տեքստ՝ ուղղված հայ ժողովրդին: Շատ եմ խնդրում Ձեզ, Վլադիմիր Վլադիմիրովիչ, ուշադիր հետեւել այդ հրեշի մտքի ընթացքին: Կուսակցության անունից եւ հանուն համաշխարհային հեղափոխության հաղթանակի Ա.Սաչկոն, նույնն է թե Ստալինը, «կոչ է անում Հայաստանին» ռուս-թուրքական պայմանագրին նվիրված գալիք կոնֆերանսում «զոհաբերել ե՛ւ իր նախկին տարածքները, ե՛ւ իր ժողովրդի այն հատվածը, որը մնացել է Թուրքիայում»:

Ասացեք խնդրեմ, Դուք երբեւէ նման մի բան լսած կա՞ք՝ «զոհաբերել սեփական ժողովրդի մի հատվածը»: Իսկ չէ՞ որ դա տեղի էր ունենում այն արյունոտ ժամանակներում, երբ հենց Թուրքիայում դեռեւս շարունակվում էր հայերի ցեղասպանությունը:

Երկար տարիներ ոչ ոք կարգին չգիտեր, թե ինչ էր խոսվել Մոսկովյան կոնֆերանսի կուլիսներում: Միայն մի քանի տասնամյակ անց, Ստալինի մահից անմիջապես հետո, թուրք պատմաբան Բայքլօղլին, հղում կատարելով պատվիրակության ղեկավար Յուսիֆ Բեյզեմին, «Աթաթուրքը Անատոլիայում» գրքում գրելու էր . «1921 թվականի փետրվարի 22-ին Ստալինի հետ առաջին հանդիպման ժամանակ նա մեզ խոստացավ օգնել զենքով, փողով, կենդանի ուժով (Եվ նաեւ կատարեց իր խոստումը: Հիշենք, մի ողջ արշավախումբ՝ մեկ բեռնատար ոսկով, զենքով եւ զինամթերքով, Մ. Վ. Ֆրունզեի գլխավորությամբ, որը բարեկամական այցով ուղեւորվեց Թուրքիա: Գիտի՞ արդյոք Ռուսաստանը, որ այդ զենքը օգտագործվեց հայերի դեմ:- Զ.Բ.): Իսկ հայկական հարցը,- ասաց Ստալինը,- դուք արդեն լուծել եք»: Ռուսաստանում Թուրքիայի առաջին դեսպան, պատվիրակության անդամ, գեներալ Ալի Ջեբեսոյը թուրքական «Վաթան» թերթի 1954 թվականի ապրիլի 20-ի համարում գրում է. «**Չիչերինը չէր համաձայնվում սահմանների հարցը լուծել հօգուտ Թուրքիայի, եւ միայն Ստալինի շնորհիվ հաջողվեց լուծել այն հարցերը, որոնք բանակցությունները կմտցնեին փակուղի**»: Թերթի նույն համարում «Ստալինը եւ հայկական հարցը» հոդվածում Ջեբեսոյը գրում է, որ Ստալինի հետ երկրորդ զրույցի ժամանակ հարցրել են. «**Արդյոք հայկական հարցը քննարկվելո՞ւ է կոնֆերանսի ժամանակ**»: Նա պատասխանել է. «**Դուք ինքներդ լուծել եք: Եթե մնացել են չլուծված հարցեր, ինքներդ էլ լուծեք**»: Ի՞նչ է ստացվում վերջնական արդյունքում: Ստալինը մարմնավորում էր Մոսկովյան պայմանագիրը: Մոսկվան մարմնավորում էր Ռուսաստանը: Եվ ստացվում է, թե Ռուսաստանն գործադրեց այդ ողջ մղձավանջը Հայաստանի դեմ: Ո՛չ, Վլադիմիր Վլադիմիրովիչ, այդ ամենը հիմնականում Ռուսաստանի դեմ էր: Ծայրահեղ դեպքում, առաջին հերթին «Ռուսաստանի դեմ»:

Նույն ոգով եւ նույն ոճով ընթացան բանակցությունները յոթ ամիս անց, արդեն Կարսում: Հայկական Կարսում, որը մտնում էր Ռուսաստանի կազմի մեջ, այն ժամանակ կար ռուսական եկեղեցի, ռուսական գերեզմանատուն, ռուսական դպրոց, որտեղ, ի դեպ, սովորել է հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցը: Մի խոսքով, այն ամենը, ինչ մտնում էր Ռուսաստանի կազմի մեջ ոչ միայն Գյուլիստանի, այլեւ, ինչպես տեսնում ենք, Թուրքմենչայի պայմանագրից հետո, գրչի մի հարվածով ակնթարթորեն հայտնվեց Թուրքիայի տիրույթում: Մինչդեռ՝ երկու դաշնագրերում էլ հանդիպում է միեւնույն դրույթը.«Նորին Մեծություն Պարսից Շահը իր անունից եւ իր ժառանգների (!-Զ.Բ.) ու հաջորդների անունից (!-Զ.Բ.) Ռուսական կայսրությանն է զիջում որպես կատարյալ սեփականություն...»: Եվ ապա հաջորդում է հայկական նախկին տարածքների ցանկը: Երկու պետություններ, դարեր շարունակ անցնելով հազարավոր փորձանքների ու դժբախտությունների միջով, մեծ կորուստների գնով հասան իրենց փրկիչ պատմական ճշմարտությանը, իսկ այսօր երկարատեւ որոնումների եւ խիզախ փոխզիջումների անգին պտուղներից սրբապղծորեն օգտվում է երրորդ կողմը, որը բոլոր ժամանակներում, ըստ էության, եղել է Պարսկաստանի եւ Ռուսաստանի թշնամին: Եվ բոլոր ժամանակներում, ըստ տրամաբանության, կմնա թշնամի: Մեկ օրինակ. այսօր մեր աչքի առջեւ պանթուրքիստական Թուրքիան ավերում է մահմեդական Սիրիան: Կասկած չկա, որ դա ուղղված է այդ թվում նաեւ Ռուսաստանի եւ Իրանի դեմ:

*Տես էջ 6*

zori.qxd 11/10/2013 20:57 Page 3



# Բաց նամակ

5-րդ էջից

Բերեմ Մ.Ս.Գորբաչովի հետ կապված մի օրինակ, որի համար «պատմական ճշմարտությունը» դատարկ հնչյուն էր: 1988 թվականի փետրվարի 26-ին նրա հետ Ղարաբաղի հարցով հանդիպման ժամանակ (ինձ հետ էր ականավոր հայ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը) ես մանրամասնորեն պատմեցի այն մասին, որ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության ողջ տարածքը, որտեղ գտնվում էին մոտ հարյուր հիսուն հայկական բնակավայրեր, ավելի քան երեք հարյուր եկեղեցիներ ու տաճարներ, իսկ հայկական լեգենդար հինավուրց Ջուղայում հաշվվում էին փոքր ճարտարապետության համաշխարհային գլուխգործոցներ հանդիսացող մոտ տասը հազար խաչքարեր, մտցված է խիստ սահմանային գոտու ռեժիմի տակ: Ո՛չ ես, ո՛չ անմոռանալի Սիլվա Կապուտիկյանը բոլորովին էլ չզարմացանք, որ Գորբաչովը չգիտեր այդ մղձավանջի մասին: Իհարկե, բացի ամենայնից, Ադրբեջանի դեմ բողոքներով մեր նամակները կրեմլյան չինովնիկների կողմից ուղարկվում էին Ադրբեջանի ղեկավարությանը: Բերեմ մի փոքրիկ հատված Քաղբյուրոյի նիստում Գորբաչովի ելույթից,որը տեղի ունեցավ մեր հանդիպումից երեք օր անց. «Ողջ Նախիջեւանին վերագրվել է սահմանային գոտու կարգավիճակ: Ազատ մուտքն այնտեղ արգելված է: Բայց չէ՞ որ այնտեղ են թաղված ցեղասպանության զոհերը, այնտեղ են գտնվում նրանց բոլոր գերեզմանները: Այնտեղ կային հայկական մշակույթի իննսուն հուշարձաններ, որոնցից մնացել է մեկը: Եվ վերջ: Ոչ մեկին չեն թողնում այն պատճառաբանությամբ, թե դա սահմանային գոտի է»:

Սա ասում էր ԽՄԿԿ Կենտկոմի Գլխավոր քարտուղարը, դիմելով ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի բոլոր անդամներին եւ անդամության թեկնածուներին, ԽՄԿԿ Կենտկոմի բոլոր քարտուղարներին, կուսակցության Կենտկոմի եւ կառավարության բոլոր հրավիրված պատասխանատու աշխատողներին: Եվ ոչինչ: Բացարձակապես ոչինչ չփոխվեց Նախիջեւանում: Ավելի վատացավ:

Հիշեցնեմ, Վլադիմիր Վլադիմիրովիչ, որ դա տեղի էր ունենում 1988 թվականի փետրվարի 29-ի երեկոյան: Այդ ժամերին Սումգայիթում դեռեւս շարունակվում էր հայերի կոտորածը: Եվ Գլխավոր քարտուղարը Քաղբյուրոյի նիստի ընթացքում խնդրեց պաշտպանության նախարար Յազովին բոլորի ներկայությամբ կրկնել այն, ինչ նախորդ օրն իրեն էր պատմել երես առ երես, **«Պատմի՛ր, Դմիտրի Տիմոֆեեւիչ, թե ինչպես են այնտեղ սպանում»** (ուշադրություն դարձրեք, որ «սպանել» բայը նա արտասանում է ներկա ժամանակով: Գորբաչովը եւ Քաղբյուրոյի անդամները գիտեին, որ կոտորածը դեռ շարունակվում էր): **«Երկու կանանց կրծքերը կտրեցին,-պատասխանում է Յազովը,- մի կնոջ գլուխը կտրեցին, իսկ աղջկան մաշկահան արեցին: Այ այսպիսի վայրագություն: Ռուս կուրսանտներ, նման բան տեսնելով, ուշագնաց էին լինում**»:

Ներեցեք ինձ, Վլադիմիր Վլադիմիրովիչ, այս նատուրալիզմի համար եւ մի մտածեք, թե ես հեռանում եմ «Ոչ թե Ղարաբաղի, այլ Ռուսաստանի խնդիր» թեմայից: Ամեն ինչ իրոք շատ պարզ է ու հասկանալի: Հայկական հսկայական պատմական տարածքը (ողջ Ղարաբաղի Խանությունը Գյուլիստանի երկրամասի հետ, Նախիջեւանի Խանությունը, Ելիզավետպոլի գավառը եւ այլ տարածաշրջաններ) ուղիղ երկու հարյուր տարի առաջ, իննամյա պատերազմից եւ Գյուլիստանի դաշնագրից հետո Պարսկաստանի կազմից անցան Ռուսաստանի կազմ: Բնականաբար, այդ տարածքում ապրում էին նաեւ այլ ազգություններ ու ցեղեր, այդ թվում եւ թուրքեր (թյուրքեր): Լենինը նրանց կոչում էր կովկասյան թաթարներ: Նույն ժամանակ էլ, որպեսզի տարբերեին կովկասի մահմեդականներին Ղրիմի մահմեդականներից, հայտնվեց նոր բառակապակցություն՝ «ադրբեջանական թաթարներ»:



Սուրբ Ամենափրկչի տաճարը, ԼՂՀ, Շուշի, 19-րդ դար



Սուրբ Ամենափրկչի տաճարը մինչեւ Շուշիի ազատագրումը

Պետք է հաշվի առնել եւ ժամանակը, երբ այս ամենը տեղի էր ունենում:

...Առաջին համաշխարհային պատերազմ: Հայոց ցեղասպանություն: Փետրվարյան հեղափոխություն: Հոկտեմբերյան հեղափոխություն: Այս մթին ու խառնաշփոթ խորապատկերի վրա հոգեվարքի մեջ գտնվող Թուրքիան մոտեցումներ է փնտրում բոլշեւիկների հետ, շողոքորթորեն առաջինն է ճանաչում սովետների իշխանությունը: Տարիներ անց Աթաթուրքը գրելու էր. «Մենք արագացրինք հաստատված կապերը բոլշեւիկների հետ, հուսալով, որ հաջողության դեպքում մենք կոչնչացնենք հայկական պետությունը, որը թարախապալար է մեր երկրի մարմնին»: Լենինը համոզված էր, որ Աթաթուրքը ամենաճշմարիտ հեղափոխական է, որը պայքարում է համաշխարհային իմպերիալիզմի դեմ: Հոկտեմբերյան հեղափոխությունից դեռ կես տարի առաջ Լենինը պահանջեց Ժամանակավոր կառավարությունից ռուսական «օկուպացիոն» զորքերը դուրս բերել Թուրքահայաստանից: Սակայն կառավարության գլուխ կանգնած Ալեքսանդր Ֆյոդորովիչ Կերենսկին ստիպված էր հրապարակավ պատասխանել բոլշեւիկներին. «Մենք չենք կարող հեռանալ Հայաստանից, քանի որ այդ դեպքում Հայաստանից ոչինչ չի մնա: Նա կզոհվի թուրքի յաթաղանից»: Եվ հին տոմարով 1917 թվականի հոկտեմբերի 11-ին, Ձմեռայինը գրավելուց 14 օր առաջ Լենինը գրում է. «Եթե սովետները իշխանությունը վերցնեն իրենց ձեռքը, մենք պատրաստ ենք (?-Զ.Բ.) զորքերը դուրս բերել Հայաստանից»: Դա կոչվում էր «հեղափոխության արտահանում», տվյալ դեպքում՝ դեպի Արեւելք, Թուրքիա: Հեղափոխության առաջնորդը հարգեց իր խոսքը: Իշխանության գալով նոր, 1918 թվականի նախօրեին, Ստալինի հետ միասին, համենայն դեպս, ստորագրեցին չարագույժ փաստաթուղթը:

Եվ սկսվեց ամենաահավորը: Զորքերը դուրս բերվեցին: Իրոք ծագեց «Ռուսաստանի խնդիրը»: Ոչ առանց Ստալինի օգնության հաշիվները մաքրեցին Գյուլիստանի պայմանագրի արդյունքների հետ: Նույնը արվեց արդեն նաեւ Թուրքմենչայի պայմանագրի արդյունքների հետ: Կարսի մարզը, Արդահանը, Սարիղամիշը իսկույն անցան Թուրքիային: Այդ ժամանակ Անդրկովկասի մահմեդականների մեծամասնությունը, մանավանդ թուրքերը փաստորեն գտնվում էին թուրքական «Մուսավաթ» կուսակցության ազդեցության տակ: Եվ այն ժամանակ ոչ ոք չկարողացավ հասկանալ, թե ինչու հանկարծ առանձնակի դաժան նենգությամբ, անհավատալի արագությամբ վերսկսվեց հայերի հիմնավոր եւ լայնորեն կազմակերպված կոտորածը՝ հիմա արդեն Բաքվում, Գանձակում (Ելիզավետպոլ, Կիրովաբադ), Շուշիում, որպեսզի վերջնականապես կտրեին Իրանը եւ նախկին իրանական հողերը Ռուսաստանից: Այդպիսին էր ոչ միայն Թուրքիայի, այլեւ Արեւմուտքի գերխնդիրը: Չէ՞ որ Թուրքիան այդ ամենը կազմակերպում էր բացեիբաց, անգլիացիների եւ գերմանացիների օգնությամբ: Հազար անգամ կրկնելու եմ, որ այն ժամանակ այդ ամենը տեղի ունեցավ այսպես ասած՝ Ռուսաստանի իրավաբանական տարածքում:

Հենց միայն այդ հանգամանքն արդեն խոսում է այն մասին, որ գլխավոր հարվածը, ինչպես միշտ էր տեղի ունենում, առաջին հերթին ուղղված էր Ռուսաստանի դեմ, որին, կրկնում եմ, պետք էր վերջապես ու վերջնականորեն կտրել, պոկել Հարավային Կովկասից: Կինչի այն ժամը, երբ Անգլիան եւ ընդհանրապես Արեւմուտքը կհասկանան, թե ինչ ճակատագրական սխալմունքի մեջ են եղել: Գերմանիան արդեն հիմա դա շոշափելիորեն զգում է: Գերմանացի քաղաքական գործիչներից ինչ-որ մեկը երկրում թուրքերի քանակի կտրուկ աճի հետ կապված դիպուկ նշել է. **«Օդից Բյուզանդիայի հոտ է գալիս»**: Այստեղ գործում է շահերի չարաբաստիկ սկզբունքը՝ ըստ Պալմերստոնի. **«Անգլիան չունի մշտական բարեկամներ: Անգլիան չունի մշտական թշնամիներ: Անգլիան ունի մշտական շահեր»**: Իսկ գիտե՞ք արդյոք, թե ինչպես հակադարձեցին թուրքերը Անգլիայի վարչապետ Հենրի Պալմերստոնի այդ բանաձեւին: «Թուրքիան չունի Անգլիայի մեծ զրահանավերը: Թուրքիան չունի Գերմանիայի պողպատը: Թուրքիան չունի Ռուսաստանի կազակներին: Բայց Թուրքիան ունի փափուկ բարձ, որ կդնի մեծ տերությունների գլխի տակ եւ կլուծի իր հարցերը»:

...Ավաղ, ինքը՝ Ռուսաստանը, փոթորկված հեղափոխական կրքերով, այդպես էլ չհասկացավ, թե ինչի հանգեցրին այդ անգլիական «շահերը», որոնք վերաճեցին թուրքականի: Կարսի պայմանագրից արդեն մեկ տարի անց Աթաթուրքը ջախջախեց Թուրքիայի կոմունիստական կուսակցությունը: Ստեղծվեց արհեստական պետական կազմավորում, որը, ինչպես գրում է պատմաբան Ե.Ա.Պախոմովը, **«կոչեցին նախնական Ադրբեջան անունով»**: Թուրքիան շարունակում էր հայերի ցեղասպանությունը Արեւմտյան Հայաստանի տարածքում նաեւ Երկրորդ համաշխարհային պատերազմի շեմին եւ, համաձայն Հիտլերի հետ պայմանավորվածության, պատրաստվում էր հարձակվել Խորհրդային Միության վրա: Իսկ հարձակման համար ազդանշան պետք է ծառայեր Ստալինգրադի անկումը (կարդացեք Խորհրդային Միության մարշալ, ԽՍՀՄ Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Ալեքսանդր Միխայլովիչ Վասիլեւսկու հուշերը): Եվ մենք (նկատի ունեմ մեր ողջ նախկին երկիրը՝ ԽՍՀՄ-ը) ստիպված էինք վերատեղակայել ամբողջ բանակներ, որոնք այնքան անհրաժեշտ էին Արեւմտյան ճակատին, Ախուրյան գետի ձախ ափում:

Բառացիորեն Հիտլերի ինքնասպանության օրը, իսկ դա, ինչպես հայտնի է, հաղթանակի օրվանից մեկ շաբաթ առաջ էր, Թուրքիան փարիսեցիաբար պատերազմ հայտարարեց Գերմանիային, որպեսզի հայտնվի հաղթանակած երկրների ցուցակում: Չերչիլի Ֆուլտոնյան ճառից հետո, երբ սկսվեց սառը պատերազմը, եւ նախկին դաշնակիցները ստեղծեցին ՆԱՏՕ-ն, ռազմական մասնագետները գտնում էին, որ ոչինչ դուրս չի գա առանց Թուրքիայի, որը ԽՍՀՄ-ի միակ «ոչսոցիալիստական» հարեւանն էր: Եվ այնժամ ԱՄՆ նախագահ Հարրի Տրումենը, որ արդեն հասցրել էր ատոմային ռումբեր նետել Հիրոսիմայի եւ Նագասակիի վրա, աշխարհով մեկ հայտարարեց. **«Թուրքիան ԱՄՆ-ի ամենաարեւելյան սահմանագիծն է: Թուրքիան ԱՄՆ-ի հիսունմեկերորդ նահանգն է»**: Այդ ժամանակ ԽՍՀՄ-ում սկսվեցին «Կոմունիզմի մեծ կառույցները», եւ Թուրքիան պարտավորեցրեց «դուստր-հանրապետությանը», ինչպես կոչում էր Ադրբեջանին, շինարարական հրարանցման քողի տակ, հետպատերազմյան սովի խորապատկերին, Ղարաբաղի, Նախիջեւանի, Գարդմանքի (Ելիզավետպոլի գավառ) հայ շինարարներին քաղցրաձայն կոչել աշխատանքի Սումգայիթի քիմիական կենտրոնի, Մինգեչաուրի ՀԷԿ-ի եւ այլ շինարարություններ:

Հիմա արդեն լավ հայտնի է, թե ինչպիսի ճակատագիր էր սպասվում այդ հայազգի «կոմունիզմի շինարարներին», եւ ինչով դա ավարտվեց 1988 թվականի փետրվարի 26-29-ին Սումգայիթում, 1988 թվականի մայիսի կեսերին Շուշիում, 1988 թվականի սեպտեմբերի 17-ին Խոջալուում, 1988 թվականի հոկտեմբերին Կիրովաբադում, 1990 թվականի հունվարի 13-20-ին Բաքվում: «Կոմունիզմի կառույցներում» չմնաց ոչ մի հատիկ հայ: Զարդեր, ցեղասպանություն, կոտորած, որոնք Գորբաչովը անվանեց պարզապես «խուլիգանություն»:

Վլադիմիր Վլադիմիրովիչ, բարի եղեք ուշադրություն դարձնել, թե պատերազմի ժամանակ Հայկական ԽՍՀ-ում եւ Ղարաբաղում քանի գեներալներ, մարշալներ, Խորհրդային Միության հերոսներ, այդ թվում նաեւ կրկնակի հերոսներ, Փառքի շքանշանի լիակատար ասպետներ կային, եւ որքան էին դրանք Ադրբեջանում: Պատերազմից հետո այդ մասին լռեցին: Փոխարենը՝ Թուրքիայում ուրախանում էին, որ Ադրբեջանը, ինչպես Աթաթուրքն էր երազում, արդեն կայացել է որպես պետություն, եւ որ հեռու չէ այն ժամը, երբ բաց կլինեն ճանապարհները դեպի հյուսիս, որտեղ տեղադրված են հյուսիսկովկասյան մահմեդական հանրապետությունները: Դեպի Արեւելք, որտեղ Կասպից ծովից այն կողմ գտնվում են միջինասիական մահմեդական հանրապետությունները: Եվ նույնիսկ հայացք էին գցում Ալթայի վրա, Յակուտիայի վրա: Ընդ որում, ինչպես միշտ է եղել, բոլորովին չէին մտահոգվում, որ վիրավորում էին այդ մահմեդական ժողովուրդներից յուրաքանչյուրի արժանապատվությունը:

Այդ կապակցությամբ մի մեջբերում կատարեմ, որն այսօր շատ բանի մասին է խոսում: 1918 թվականի հունիսին, ռուսական զորքերը Հայաստանից դուրս բերելուց հետո, Թուրքիայի եւ Անդրկովկասյան սեյմի միջեւ Բաթումում կայացած բանակցությունների ժամանակ ոչ այլ ոք, այլ թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան ասաց, դիմելով հայկական պատվիրակությանը. **«Դուք տեսնում եք, որ ճակատագիրը մեզ մղում է Արեւմուտքից Արեւելք: Մենք հեռացանք Բալկաններից, հեռանում ենք նաեւ Աֆրիկայից: Բայց պետք է ձգտենք դեպի Արեւելք. այնտեղ է մեր արյունը, մեր կրոնը, մեր լեզուն: Եվ այդ ձգտումը իր տարերային ուժն ունի: Մեզ ճամփաներ են պետք դեպի այդ**

Տես էջ 7

zori.qxd 11/10/2013 20:57 Page 4



# Բաց նամակ

*6-րդ էջից*

**կողմ: Իսկ դուք՝ հայերդ կանգնած եք մեր ճանապարհին»:** Ուշադրություն դարձրեք, այդ դահիճը խոսում էր հարաբերական «նրբանկատ» տոնով: Բանն այն է, որ Բաթումի նիստի բառացիորեն նախօրեին թուրքական բանակը փորձել էր ներխուժել Երեւան մեկ նպատակով՝ վերջնականապես ոչնչացնել Հայաստանը, որպեսզի վերջնականապես կտրի «Հարավային ուղղությունը» (տերմինը Գլխավոր շտաբինն է) Ռուսաստանից: Սակայն ինքը ջախջախվեց Սարդարապատում, Ղարաքիլիսայում եւ Ապարանում: Այդ հաղթանակից հետո էլ ստեղծվեց հայկական առաջին անկախ հանրապետությունը:

Ես ընդգծում եմ այդ պատմական փաստը, հիշեցնելու համար, որ Անդրկովկասի բոլոր երեք հանրապետություններն ստեղծվել են ազգային կուսակցությունների կողմից. վրացական մենշեւիկների, Հայ հեղափոխական դաշնակցության եւ թուրքական «Մուսավաթ» կուսակցության, որի մեջ էին ներգրավել ոչ միայն թուրքերին, այլեւ Կովկասի շատ մահմեդականների, շահարկելով կրոնական ընդհանրությունը: Դա Թուրքիայի նենգամիտ խաղն էր: Ահա եւ ստացվում է, որ եթե Հայաստանը եւ Վրաստանը Անդրկովկասից ռուսական զորքերի դուրս բերումից հետո ստիպված էին ստեղծել անկախ հանրապետություններ, ապա թուրքերն այլ նպատակ ունեին՝ բոլոր մահմեդականներին «հավաքել» նոր հանրապետության մեջ, որը ժամանակին պետք է վերածեր մենաշնորհային, զուտ թուրքական պետական կազմավորման՝ ուծացման, թուրքացման ճանապարհով: Այդ գործընթացի հրեշավոր արդյունքները մենք շոշափելիորեն տեսանք արդեն Հայրենական մեծ պատերազմից հետո, ԽՄԿԿ XX համագումարից հետո, Ալիեւների իշխանության գալուց հետո:

Ողբերգական իրավիճակ ստեղծվեց Վրաստանում (ե՛ւ ԽՍՀՄ փլուզումից, ե՛ւ 2008 թվականի իրադարձություններից հետո): 1959 թվականին Վրաստանում ապրում էին 145 հազար ադրբեջանցիներ: 1989 թվականին (ԽՍՀՄ վերջին մարդահամարի տվյալներով)՝ 300 հազար: Ներկայումս՝ կես միլիոնից ավելի: Ահռելի խնդիր կա Աբխազիայում եւ Աջարիայում: Թուրքերի եւ թուրքական ներդրումների բուռն հոսքը այդ երկու տարածաշրջաններ փոխեցին ժողովրդագրական պատկերը: Միայն վերջին տարիներին Թուրքիան Աջարիայում կառուցել է մոտ երկու հարյուր մզկիթ եւ 70 մեդրեսե (իսկ դա ամեն դեպքում բարձրագույն դպրոց է, որը պաշտամունքի, այսինքն թուրքական ծառայողներ է պատրաստում): Այս ամենը մեծ խնդիր է ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Ռուսաստանի, եւ, իհարկե, Վրաստանի համար: Ճանապարհների խնդիր, կենսապահովման խնդիր: Բայց ամենից սարսափելին այն է, որ ե՛ւ աբխազներին, ե՛ւ աջարներին ապագայում սպասվում է այն ժողովուրդների ճակատագիրը, որոնք ապրում էին Ադրբեջանում խորհրդային եւ հետխորհրդային ժամանակներում:

Բերեմ մի քանի օրինակներ եւ սկսեմ լեզգիների ողբերգական ճակատագից, որում այսօր ընդհանրացված արտացոլվում են այն բոլոր ժողովուրդների ու ցեղերի ճակատագրերը, որոնք հայտնվել էին, այստեղ այդեն պետք է ճշգրիտ արտահայտվել՝ Ադրբեջանի Թուրքական հանրապետությունում. «Լեզգիներին ստիպում են սովորել ադրբեջաներեն լեզվով: Լեզգիների բոլոր պատմական իրադարձությունները վերագրում են ադրբեջանական ժողովրդին, ինքնակամորեն հնացնելով նրա պատմությունը: 1980 թվականին (Հեյդար Ալիեւի օրոք) Բաքվի «Լեզգի-մզկիթը» հանկարծ սկսեց կոչվել պարզապես XVII դարի մզկիթ: Փակեցին լեզգիական թատրոնը, որը գործում էր XIX դարի վերջերից: Հանրապետությունում, որտեղ ապրում են յոթ հարյուր հազար լեզգիներ, վերացվեց այդ լեզվով տպագրվող միակ թերթը: Նույնիսկ 1938 թվականի Խորհրդային մեծ հանրագիտարանը գրում է, որ Ադրբեջանում **«խախտվել է ազգային միասնությունը, ինչը հանգեցրել է ազգային փոքրամասնությունների թուրքացման»**: Հենց այդպես՝ թուրքացման: Իսկ սա արդեն մարտավարություն է՝ գործողության մեջ:

Երկու խոսք թալիշների մասին: Տվյալները արեւելագետ Վ.Միլլերինն են. «Լենքորանի շրջանում թալիշները կազմում էին բնակչության 86,3 տոկոսը, Զուվանդի շրջանում՝ 82,4, Աստարայի շրջանում՝ 86 եւ Մասսալլայի՝ 80: Դա 1962 թվականին էր: Իսկ հիմա տեսեք, թե ինչ կատարվեց այդ տոկոսների հետ ութ տարի անց. **«Համաձայն 1970 թվականի մարդահամարի, հանրապետությունում չկար այդ հինավուրց ժողովրդի ոչ մի ներկայացուցիչ»**: Ես մի թալիշ ընկեր ունեի՝ Թալիշինսկի ազգանունով: Ահա թե ինչ ասաց նա այդ «չարագուշակ մարդահամարի» մասին. **«Գիտե՞ք, թե որքան սարսափելի է ամենաիսկական ցեղասպանություն վերապրել թղթի վրա: Մի կողմից շարունակում ես ապրել, հավատալ Ալլահին, բայց ինքդ չկաս պատմության մեջ: Նախնիներդ թալիշներ են եղել, իսկ հիմա մեզ վերածել են այսպես կոչված «թուրք-ազերիների»:**

Եթե միայն իմանայիք, թե քանի-քանի այդպիսի ահավոր փաստարկներ կան իմ տետրերում ու գրքերում: Այդ տվյալներն ամենից շատ պետք են Ձեզ, Վլադիմիր Վլադիմիրովիչ: Պետք են Ռուսաստանին: Այդ փաստարկները ցույց են տալիս, թե ինչպես մեր ընդհանուր տարածքի վրա ստեղծվեց նոր թուրքական հանրապետություն՝ սահմանային ծայրամասում: Այսօր դա առհասարակ ոչ մի ծայրամաս էլ չէ: Դուք կարծում եք պատահակա՞ն էր, որ Թուրքիան, դեռեւս 1921 թվականին օգտագործելով Ստալինին, հասավ նրան, որ նորաստեղծ Ադրբեջանին հանձնվի Նախիջեւանը՝ «առանց երրորդ կողմին հանձնելու իրավունքի»: Պատահական չէր եւ այն, որ շուտով փափուկ բարձ դնելով Իրանի շահնշահի գլխի տակ, տիրացավ (հսկայական միջոցների գնով) մի կտոր տարածքի Արաքսի աջ ափում: Այդպիսով նա մոտ տասը կիլոմետրանոց սահման ձեռք բերեց Նախիջեւանի հետ: Եվ կարծում եք պատահակա՞ն էր, երբ Ալիեւը, լինելով ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ, որը, բացի ամենայնից, տնօրինում էր նաեւ տրանսպորտը, ցանկացավ «իր ճանապարհը» գցել Նախիջեւանից դեպի այսպես ասած «մայրցամաքային» Ադրբեջան: Չէ՞ որ դա արվեց միայն նրա համար, որ Հայաստանը (եւ Ռուսաստանը նույնպես) կտրեն Իրանից: Բոլորովին պատահական չէր եւ այն, որ Հայաստանն Իրանին կապող Մեղրու շրջանը թուրքական վարչապետն անվանեց «Անիծյալ սեպ»: Ինչպեսեւ պատահական չէր, որ տխրահռչակ Պոլ Գոբլն առաջարկում էր այդ նույն «անիծյալ սեպի» դիմաց Հայաստանին տալ Ղարաբաղը: Չեմ կարծում, թե ղարաբաղյան կարգավորման հարցով Մինսկի խմբի միմյանց փոխարինող համանախագահները տեղյակ են այն ամենին, ինչի մասին խոսում եմ:

Պատահական չէր եւ այն, որ դանդաղ, բայց հաստատուն ազատվում էին այսպես կոչված փոքր ժողովուրդներից: Այդ կապակցությամբ խոսենք քրդերի մասին: **«Մահմեդական աշխարհն այսօր լռում է, տեսնելով, թե ինչպես են ադրբեջանցիները զանազան հնարքների օգնությամբ, խաբեությամբ ձգտում «յուրացնել» մեկ քառորդ միլիոն քուրդ մահմեդականներին: Ինչո՞ւ քրդերի հետ նույն բանը չի կատարվում Հայաստանում եւ Վրաստանում: Չէ՞ որ այդ հանրապետություններն էլ Ադրբեջանի նման ներառված էին նույն սոցիալ-տնտեսական համակարգում: Օրինակ, Հայաստանում քրդերի համար կան դպրոցներ, քրդագիտական կենտրոն, Գրողների միության բաժանմունք, հրատարակչություն, տպագրվում է թերթ: Ադրբեջանի պետական իշխանությունները քրդերի մահմեդական դավանանքի փաստը օգտագործում են ուծացման, այսինքն ցեղասպանության նպատակներով: Ազգային պատկանելությունը նրանք գիտակցված կերպով փոխարինում են կրոնականով, այսպիսով սեփականացնելով մի ողջ ժողովրդի»**,- գրել է հայտնի քուրդ գիտնական Շաքրո Միհոն:



*Գանձասարի վանք, Լեռնային Ղարաբաղ, Մարտակերտի շրջան, 8-րդ դար*

Ասացեք խնդրեմ, Վլադիմիր Վլադիմիրովիչ, դե ինչպե՞ս այս ամենից հետո Դուք Մինսկի խմբի Ձեր գործընկերների հետ գեթ մեկ վայրկյան կարող եք մտածել Ղարաբաղը Թուրքիային տալու մասին: Մի՞թե պարզ չէ, թե ինչ կկատարվի Ղարաբաղի հետ անմիջապես եւ Ռուսաստանի հետ՝ որոշ ժամանակ անց:

...Կյանքը վաղուց ցույց է տվել, թե ամբողջ ժողովուրդների ինչպիսի հրեշավոր աղետի է հասցրել Գյուլիստանի դաշնագրի էության, իմաստի, հումանիզմի սրբապղծումը, դաշնագիր, որին նույնիսկ պարտված կողմը, մանավանդ տարիներ անց, վերաբերվել է եւ փիլիսոփայաբար, եւ՛ ճշտված մարտավարությամբ: Ռուսաստանն իր սահմաններն ամրապնդեց, ունենալով այնպիսի պատվար, ինչպիսին Հայաստանն է: Իսկ Իրանն, ըստ էության, ազատվեց այն տարածքից, որտեղ վխտում էին իր դարավոր թշնամիները:

Տեսեք, թե ինչպիսի համառությամբ են թուրքերն ու ադրբեջանցիները պարզապես պղծում Գյուլիստանի եւ Թուրքմենչայի դաշնագրերի արդյունքները: Նրանք դա անում են լկտիաբար: Եվ այդ ցինիզմը շարունակվում է մինչեւ օրս: Իրենց կեղծ պատմությունը օրինականացնելու, դեռ մի բան էլ հնացնելու նպատակով Ալիեւ-ավագը (դա 1998 թվականին էր, Ելցինի օրոք, երբ Դուք ՀՖԲ-ի տնօրենն էիք) նա ծաղրալի օրենք ընդունեց...ադրբեջանցիների ցեղասպանության մասին: Եվ նույնիսկ հատուկ օր մտածեց՝ մարտի 31-ը: Ասենք, ինչո՞ւ ոչ: Հայերն ու հրեաներն ունեն այդպիսի օր: Ինչո՞ւ իրենք էլ չունենան: Եվ պարզվում է, գիտե՞ք՝ ըստ Ալիեւի ով կատարեց իր երկրի պետական քաղաքականության աստիճանով իրագործված այդ «հանցագործությունը»: Ռուսաստանը: Ճիշտ է, Ալիեւը գտնում է, որ այդտեղ խառն էր նաեւ հայ շովինիստների մատը: Պատկերացրեք, Դեր-Զոր անապատի տաք ավազները՝ ամբողջովին կարմրած հայկական արյունից, մեկուկես միլիոն գազանաբար սպանված հայեր, ոչ միայն պարզապես օթեւանից, այլեւ հայրենիքից զրկված միլիոնավոր փախստականներ, եւ հանկարծ այդ նույն ժամանակ հայերն իրագործում են մի ժողովրդի ցեղասպանություն, որն իրականում դեռեւս գոյություն չուներ: Եվ որպեսզի իրոք հնացնի իրենց եւ գոնե մի փոքր ճշմարտանման ինչի, Ալիեւը խորանում է ժամանակի մեջ, մեղադրելով Ռուսաստանին բոլոր մահացու մեղքերում: Այստեղ ավելի շատ բաժին հասավ ե՛ւ Պետրոս Առաջինին, ե՛ւ Եկատերինա Երկրորդին, ե՛ւ Ալեքսանդր Առաջինին ու Նիկոլայ Առաջինին, ե՛ւ, իհարկե, ամբողջությամբ վերցրած՝ Ռուսաստանին ու Իրանին: Փաստաթղթում սեւով սպիտակի վրա գրված է. «Ադրբեջանի հյուսիսային մասը նվաճվեց (?-Զ.Բ.) Ռուսաստանի կողմից, նրա հարավային մասը հայտնվեց (?-Զ.Բ.) Իրանական պետության տիրապետության տակ»: Եվ սա արդեն միայն ճղճիմ կեղծիք չէ: Սա տիպիկ թուրքական քաղաքականություն է:

Վլադիմիր Վլադիմիրովիչ, համառոտ խնդրում եմ գտնել հինգ րոպե՝ կարդալու համար այդ զառանցանքը այսպես կոչված ադրբեջանական ցեղասպանության մասին, եւ այնժամ Դուք կհամոզվեք, որ այսօր ողջ աշխարհում նույն ոճով, նույն բառերով անհեթեթություն ու սադրանք է տարածվում «Խոջալու» անվան տակ: Աշխարհի բազմաթիվ լեզուներով Խոջալուի մասին հրատարակվող յուրաքանչյուր գրքում հորինվում են նոր դրվագներ, սյուժեներ, զոհերի նոր թվեր, որոնց քանակը արդեն հասել է մինչեւ 10 հազարի: 1989 թվականի մարտի 25-ին ես ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր ընտրվեցի Ասկերանի ազգային-տարածքային օկրուգից, որի մեջ էր մտնում Խոջալու գյուղը եւ որն արդեն այդ ժամանակ վերածված էր կրակակետի: Այսպես, ուրեմն, Խոջալուում, որտեղ միայն ադրբեջանցիներ էին ապրում, ընտրողների քանակն ընդամենը մոտ 800 մարդ էր: Ի դեպ, ընտրություններից երկու ամիս առաջ, 1989 թվականի հունվարի 15-ին ԽՍՀՄ բնակչության մարդահամար անցկացվեց, այնպես որ, այդ ամենը կարելի է ստուգել: Խոջալուի մասին առաջին սադրիչ հրապարակումները հայտնվեցին Թուրքիայում, որը միշտ առաջ է անցնում իրադարձություններից: Այն մասին, թե իրականում ինչ էր տեղի ունենում Խոջալու կրակակետում եւ դրա շրջակայքում, կարելի է կարդալ «Նեզավիսիմայա գազետա»-ի 1992 թվականի ապրիլի 4-ի համարում: Հեղինակը ոչ այլ ոք է, քան Ադրբեջանի այն ժամանակվա նախագահ Մութալիբովը:

Արդյոք ուշադրություն դարձրե՞լ եք, Վլադիմիր Վլադիմիրովիչ, որ պուտչից հետո, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների հինգերորդ, վերջին համագումարից հետո Թուրքիայի այն ժամանակվա նախագահ Թուրգուտ Օզալը արդեն անթաքույց շտապեց այցելություններ կատարել բոլոր միութենական մահմեդական հանրապետություններ եւ ինքնավար կազմավորումներ, իր դեսպանությունները ստեղծելով դեռեւս գործող խորհրդային իշխանության օրոք: Այդ նույն ժամանակ էլ լեգալ կերպով, անարգել Ռուսաստան հորդեցին թուրքերի բազմություններ: Իրոք որ, ծայր առավ «Բյուզանդիայի սինդրոմ»: Այդպես եղավ 1453 թվականին Բյուզանդիայում, որտեղ առանց առանձնակի դժվարությունների, ահռելի կայսրության տերերը դարձան թուրքերը: Իննսունական թվականների քաղցած եւ ցուրտ Ռուսաստանում հանկարծ հայտնվեցին «էժան» բանվորական ուժի ողջ բրիգադներ Թուրքիայից: Քանզի այդ ժամանակ հետխորհրդային, ավելի ճիշտ՝ լուժկովյան Մոսկվան սկսեց հիմնավորապես վերակառուցվել նոր ձեւով, որը ոչ մի ընդ-

*Տես էջ 8*

zori.qxd 11/10/2013 20:57 Page 5



# Բաց նամակ

7-րդ էջից

հանուր բան չուներ ավանդական ռուսական ճարտարապետության հետ: Այն տարիներին ես հաճախ էի մտածում այն մասին, որ եղել է ժամանակ, երբ Ռուսաստանում շինարարական եւ ճարտարապետական աշխատանք կատարել են նաեւ հայերը: Այստեղ ճիշտ պահն է հիշելու ռուսական ազգային ոգու մեծ կրող, ռուսական ազգային արվեստի մարտիկ, ռուսական մշակույթի մեծ գործիչ Վլադիմիր Վասիլեւիչ Ստասովին: Հաստատելով, որ հայերը եւ վրացիները Ռուսաստան են եկել ոչ դատարկ ձեռքերով, նա գրել է. «...հայկական եւ վրացական արվեստները հայտնի դարաշրջանում մեծ ազդեցություն են ունեցել ռուսական արվեստի վրա նրա ձեւավորման ժամանակներում, եւ ներկայումս անհնար է, ուսումնասիրելով ռուսական արվեստի առաջին դարերը ճարտարապետության կամ գեղարվեստական զարդանախշության, մասնավորապես էլ՝ գեղանկարչության առումով, մի կողմ թողնել հայկական եւ վրացական արվեստները...»:

Եվ ահա հիմա կառուցում էին նոր Մոսկվա այն սկզբունքով, թե ով ավելի շատ կվճարի եւ ով ավելի էժան կկառուցի: Այդ նպատակի համար Թուրքիայի հետ դարպասները կրնկի վրա բաց էին: Այդ ահռելի բանակը միայն շինարարներից չէր բաղկացած: Եվ թուրքական արտագնացների ծախսերն իրենց վրա էին վերցրել ոչ թե ինչ-որ շինարարական ընկերություններ, այլ ...թուրքական կրթական հիմնադրամները, որոնք լիցեյներ են ֆինանսավորում Ռուսաստանում: Խոսքը բացառապես թուրքական «Ուֆուկ», «Սերհատ», «Տորոս», «Տոլերանս», «Էֆլյոք» եւ այլ հիմնադրամների մասին է, որոնք պանթուրքիստական ուղղության «Նուրջուլար» իսլամական կրոնածայրահեղական աղանդի կառուցվածքային ստորաբաժանումներն են:

Դժվար չէ գուշակել, թե ինչու պանթուրքիզմի այդ չարագուշակ ծրագիրը սկսեց մշակվել եւ կենսագործվել հենց 1993 թվականին: Դա, ինչպես հայտնի է, ռուսական հասարակության մեջ անհավատալի պառակտման եւ քաոսի տարին էր: Եվ օգտվելով իրավիճակից, իրարանցումից, խառնաշփոթից, պանթուրքիստները հենց 1993 թվականին Բիշքեկում անցկացրեցին նախկին ԽՍՀՄ տարածքում ապրող թուրքալեզու ժողովուրդների համագումար: Եվ այնտեղ բացարձակ բացեիբաց խոսվեց ոչ թե Իրանի, ոչ թե իսլամական կոնգրեսի, ոչ թե ինչ-որ իսլամական կրոնական կազմակերպությունների, այլ միայն ու միայն Անկարայի, Թուրքիայի, պանթուրքիզմի գործուն մտադրության մասին՝ իրենց ազդեցությունը տարածելու Ռուսաստանի մահմեդական տարածաշրջանների վրա:

Վստահաբար կարող եմ ասել, որ դարերով Ռուսաստանում ապրած մահմեդական ժողովուրդներից ոչ մեկը ելույթ չունեցավ Ռուսաստանի դեմ, քրիստոնյաների դեմ: Եթե ինչ-որ բան էլ կար, ապա, որպես կանոն՝ դրսից կազմակերպված սադրանք էր. «Գորշ գայլեր», «Ազգայնական շարժման կուսակցություն», «Ընտանեկան օջախ Թուրան» եւ այլն: Այդ մասին լավ գիտեն հայերը: Հայաստանում առհասարակ երբեք արմատ չի գցի ոչ հակասեմիթը, ոչ հակաիսլամիստը, ոչ մոլի կոսմոպոլիտը: Հազարամյակներ շարունակ գտնվելով քարավանային ճանապարհների խաչմերուկում, ներքաշել ենք մեր մեջ տարբեր փիլիսոփայություն, տարբեր մշակույթ, որը մեզ դարձրել է հանդուրժողական: Ահա արդեն ավելի քան չորս դար Իրանում խաղաղ ու բարեկամաբար հարեւանություն են անում մահմեդական մզկիթը եւ հայկական առաքելական եկեղեցին: Նույնը կարելի է ասել փոխադարձաբար հարստացնող մշակույթի, գրականության, հրատարակության, սպորտի եւ նույնիսկ քաղաքականության մասին: Ահա արդեն ավելի քան հարյուր տարի հայերը սրտանց ու անկեղծաբար իրենց խորին երախտագիտությունն են հայտնում ողջ Արաբական աշխարհի, Հյուսիսային Աֆրիկայի, Հյուսիսային Կովկասի եւ Պովոլժիեյի մահմեդականներին մեր այն հայրենակիցների հանդեպ ցուցաբերած հումանիզմի, մարդկային օգնության, եղբայրաբար տրամադրած օթեւանի համար, որոնք հրաշքով փրկվել էին Ցեղասպանության ժամանակ Թուրքիայում: Ընդգծենք, մահմեդական Թուրքիայում:

Հենց այդ պատճառով էլ անթույլատրելի է որեւէ ընդհանրացում անել: Պանթուրքիզմը նույնը չէ ինչ կրոնը: Դա քաղաքականություն է՝ ֆաշիստական ուղղվածությամբ: Պատահական չէր, որ իր մարդասպաններին 1939 թվականի օգոստոսին Լեհաստան ուղարկելուց առաջ Հիտլերը հանգստացնում էր նրանց. «**Ո՞վ է այսօր հիշում Թուրքիայում հայերի ոչնչացման մասին**»: Եվ եթե գերմանական ժողովուրդը իր մեջ ուժ գտավ եւ ապաշխարեց հրեաների առջեւ, ապա Թուրքիան ոչ մի նման բան երբեք չի անի: Ավելին, նա բոլոր հաջորդած տասնամյակների ընթացքում շարունակել է իրագործել հայերի ցեղասպանությունը ոչ միայն Սումգայիթում եւ Բաքվում, այլեւ հայկական ողջ պատմական տարածքում, որը, հիշենք Սոլժենիցինի խոսքերը՝ «կտրեցին-տվեցին» նորաստեղծ հանրապետությանը, որը պայմանականորեն (այսինքն՝ նախապես, ժամանակավորապես) անվանվեց Ադրբեջան: Աթաթուրքը առաջինը կազմեց հետեւյալ բանաձեւը. «**Թուրքիա եւ Ադրբեջան մեկ լեզու, մեկ հավատ, մեկ արյուն**»:


Դադիվանք, Լեռնային Ղարաբաղ, Շահումյանի շրջան, 9-րդ դար

Տասնամյակներ անց, գտնվելով Բաքվում, Թուրքիայի վարչապետ Դեմիրելը ասելու էր. «**Եղբայրներ՝ հավատքով, եղբայրներ՝ լեզվով, եղբայրներ՝ արյամբ**»: Իսկ տարիներ անց Ալիեւ ավագը քիչ այլ կերպ էր ասելու. «**Մեկ ժողովուրդ, երկու պետություն**»: Եվ հավելելու էր՝ «առայժմ»:

Մի՞թե հասկանալի չէ, որ ստեղծվել է եւս մեկ Թուրքիա եւ հայերի ու մյուս հարեւանների նկատմամբ իրեն պահում է ինչպես Օսմանյան Թուրքիան: Եվ պե՞տք է արդյոք զարմանալ, երբ Ալիեւ կրտսերը տոնական, հանդիսավոր պայմաններում, ողջ աշխարհի աչքի առջեւ ծաղիկներով դիմավորում եւ գրկում է դահճին, որը կացնով կտրել է քնած մարդու գլուխը միայն այն պատճառով, որ նա ազգությամբ հայ էր: Իսկ Դուք գործի բերումով մեկ անգամ չէ, որ լսել եք այն մասին, թե ինչպես է Ադրբեջանի նախագահը «սեփական» հանրագիտական բառարաններից անձամբ ջնջում բոլոր հայկական անվանումներն ու տերմինները, որ նա, արհամարհելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի բոլոր նախազգուշացումները, գետնին է հավասարեցրել իր հորից հետո դեռեւս մնացած բոլոր եկեղեցիներն ու խաչքարերը եւ այդ ամենից հետո ցինիկաբար հայտարարում է Ղարաբաղյան կարգավորման գծով Մինսկի խմբին, թե անձամբ երաշխավորում է լայն լիազորություններ Ղարաբաղի հայերին: Նույնն էր ասում 1921 թվականին Թուրքիան Կարսում հայկական Նախիջեւանի մասին, որտեղ այսօր չի մնացել ոչ մի բնիկ հայ, ոչ մի եկեղեցի, ոչ մի խաչքար:

...Մեծարգո Վլադիմիր Վլադիմիրովիչ, երկրորդ անգամ ընտրվելով Ռուսաստանի նախագահ, Դուք երկրորդ անգամ ինքնըստինքյան դարձաք ԵԱՀԽ Մինսկի խմբի համանախագահ: Մենք անընդհատ լսում ենք այն մասին, թե իբր ժամանակն է արդեն «ինչ-որ բան» ձեռնարկել: Կցանկանայի ձեզ խորհուրդ տալ. մի՛ շտապեք (ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահների հետ միասին) կատարել մինչեւ վերջ չմտածված, մինչեւ վերջ չհաշվարկված քայլ: Երբ մոտենում ես անդունդի եզրին, անհրաժեշտ է անել ամենից սթափ, փրկիչ քայլը՝ քայլ ետ: Մտածեք վաղը չէ մյուս օրվա մասին: Մի՛ մոռացեք, որ ձմռանը ցուրտ է լինում: Սա պրիմիտիվիզմ չէ: Սա վաղվա օրվա, ապագայի համար անհանգստության նորմալ զգացում է: Նման մի բան լսել եմ Կամչատկայի տունդրայում իմաստուն կորյակ ծերունիներից, որոնց մասին շատ պատմվածքներ ու վիպակներ եմ գրել: Նույնիսկ հարյուր միլիարդի ապրանքաշրջանառությունը (Ռուսաստան-Թուրքիա) չպետք է բթացնի իմաստության զգացումը, վաղվա օրվա համար անհանգստության զգացումը եւ այն բանի գիտակցումը, որ կառավարողներն ավելի շատ ունեն իմաստունների կարիքը, քան իմաստունները՝ կառավարողների:

Քսան տարի է անցել Մինսկի խմբի հիմնադրումից: Անգամ՝ քիչ ավելի: Եվ այդ ամբողջ ժամանակ Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահների ամեն մի նոր սերունդ ապարդյուն փորձում էր հասկանալ, տվյալ կոնկրետ դեպքում՝ «ինքնորոշում» եւ «տարածքային ամբողջականություն» երկընտրանքի անհեթեթությունը: Դե «ինքնորոշումը» դեռ հասկանալի է: Բայց ո՞վ է որոշել խորհրդային հանրապետությունների պատմական սահմանները: Միասնական պետությունում, ինչպես արդեն ասել ենք, դրանք պայմանական էին: Չէ որ Հելսինկյան համաձայնագրերի վերջնական արձանագրությունը բոլոր հանրապետությունների, ամբողջ ԽՍՀՄ-ի անունից 1975 թվականի օգոստոսին ստորագրել է մի մարդ՝ Լ. Ի. Բրեժնեւը: Այնպես որ, եթե պետք է խոսել տարածքային ամբողջականության մասին, ապա խոսք կլինի բացառապես ամբողջ ԽՍՀՄ-ի 22 միլիոն 400 հազար քառակուսի կիլոմետր տարածքի մասին, որի մեջ մտնում էին բոլոր 15 հանրապետությունները: Եվ եթե մեզ թույլ տանք խոսել յուրաքանչյուր հանրապետության իրական տարածքի մասին, այդ թվում եւ՛ ՌՍՖԽՀ-ի, եւ՛ Հայաստանի, եւ՛ Ադրբեջանի, ըստ էության անհրաժեշտ է նոր «Հելսինկի»:

Այս կապակցությամբ, մեծարգո Վլադիմիր Վլադիմիրովիչ, ներեցեք չափն անցնելու համար, խորհուրդ կտայի Ձեզ մտորել իրոք սուրբ մի հարցի մասին. ամեն դեպքում՝ ինչպե՞ս է այսպես ստացվել: Այն ամենից հետո, ինչ միասին ապրել են ռուս եւ հայ ժողովուրդները, հանկարծ ընդհանուր սահմաններ չունենք: Անհավատալի է: Հենց միայն XIX դարի առաջին քառորդում Ձեր եւ մեր ավելի քան 200 հազար նախնիներ իրենց կյանքն են տվել այն բանի համար, որ միավորվեն, այն բանի համար, որ ամրապնդեն «Հարավային ուղղությունը»: Շատ հաճախ նրանց թաղում էին ընդհանուր եղբայրական գերեզմաններում: Այնտեղ, հավանաբար, եւ՛ Ձեր, եւ՛ իմ նախնիներն էին:

Ես խորապես համոզված եմ, որ ստեղծված բարդ իրադրության պայմաններում, սթափության թելերից հյուսված տրամաբանությունը համառորեն պարտադրում է ձեզ, Վլադիմիր Վլադիմիրովիչ, եւ Մինսկի խմբի Ձեր գործընկերներին՝ բառիս ուղղակի եւ բուն իմաստով, անել միակ, իրոք իմաստուն քայլը: Վերցնել ու այցելել Ղարաբաղ, այցելել ազատագրված շրջաններ, ձեռքերով դիպչել Ամարաս եզակի տաճարին, որտեղ քսանական թվականներին որպես երեց քահանա էր ծառայում իմ նախապապ Հովհաննեսը, որը , ինչպեսեւ իմ հայրը, դարձավ ստալինիզմի զոհ: Տաճարը IV դարում կառուցել է առաջին Ամենայն հայոց կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի թոռը, Գրիգոր Լուսավորչի, որի շնորհիվ Հայաստանը 301 թվականին առաջինն ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն: Իսկ եթե Ձեզ եւ Ձեր գործընկերներին թվա, թե չորրորդ դարի տաճարը ժամանակային առումով չափից ավելի հեռու է, ապա առաջարկում եմ այցելել այլ եզակի տաճար՝ Դադիվանք: Սա արդեն վեցերորդ դար է: Եթե դա էլ չափից ավելի է հեռացած դեպի դարերի խորքը, ապա կարող եք այցելել XII դարի համաշխարհային տաճարաշինության գլուխգործոց Գանձասար, որտեղից, կարելի է ասել, առաջին հայ դիվանագետ Իսրայել Օրին XVII դարի ավարտին ճանապարհվեց Պետրոս Առաջինի մոտ: Կարելի է ավելի մոտ ժամանակներ ընտրել, այցելելով Շուշիի Քրիստոս Փրկչի տաճար: Շինարարությունը սկսվել է 1868 թվականին, Ալեքսանդր Երկրորդի հովանավորությամբ եւ Ամենայն հայոց կաթողիկոս Գեւորգ IV-ի օրոք եւ ավարտվել է Ալեքսանդր Երրորդի եւ կաթողիկոս Մարգար Առաջինի օրոք, 1887 թվականին: Կարող եք հասցնել ներկա լինել նաեւ Մայր տաճարի բացմանը Ստեփանակերտում, որը կառուցվում է 1930 թվականին ավերված եկեղեցու տեղում: Դա այն տարին էր, երբ Ստալինին հանդիսավոր հանձնեցին աթեիստների միության անդամի թիվ մեկ վկայականը: Բայց ամենագլխավորն այն է, որ հանդիպեք ղարաբաղցիներին, որոնց նախնիները կռվել են Գյուլիստանի երկրամասում XIX դարի սկզբին եւ որոնք ուղիղ, այսպես ասած, արյունակցական կապ ունեն Գյուլիստանի պայմանագրի կենդանի պատմության հետ: Այդ իսկ պատճառով էլ մենք պատմական իրավունք ունենք Ձեզ հրավիրել Արցախ, Գյուլիստան:

...Մոտավորապես մեկուկես դար առաջ, կարելի է ասել՝ Ձեր գործընկերը, Անգլիայի վարչապետ Բենջամեն Դիզրայելին գրել է հակիրճ, բայց շատ իմաստուն նախադասություն. «**Արդարությունը ճշմարտությունն է գործողության մեջ**»: Իսկ ճշմարիտ արդարությունը դժվար է պատկերացնել առանց օրենքի եւ նույնպես գործողության մեջ: Առանց դատի: Ի դեպ, Վլադիմիր Վլադիմիրովիչ, «Министерство юстиции» բառակապակցությունը հայերեն թարգմանվում է որպես «արդար դատի նախարարություն»: Եվ վերադառնալով մեր թեմային պատմական ճշմարտության մասին, որը պետք է լինի կոնկրետ, ես տեսնում եմ արդարացի ելքը կարծես թե ճակատագրական իրավիճակից, որում մենք բոլորս հայտնվել ենք, Սումգայիթում եւ Բաքվում հայերի ցեղասպանության կազմակերպիչների եւ կատարողների դեմ արդար դատի մեջ: Հիշեցնեմ, դատավարություններն ընթանում էին Մոսկվայում եւ ԽՍՀՄ այլ քաղաքներում: Սակայն մինչեւ հիմա պարզ չէ, թե ով հրաման տվեց դադարեցնել դատալսումները: Անհավատալի ցինիզմ կար եւ նրանում, որ շուտով բոլոր մարդասպանները ազատ արձակվեցին եւ Ադրբեջանում բարձրացվեցին ազգային հերոսների աստիճանի:

Սումգայիթի եւ Բաքվի զոհերի ողբերգությունը նաեւ նրանում է, որ նրանք համարյա բոլորը Ղարաբաղի նախկին բնակիչներ էին կամ նրանց սերունդներ: Դրանք մարդիկ էին, որոնք կորցրել էին իրենց հայրենիքը, որն այսօր-վաղը, եթե ոչինչ չձեռնարկվի,

Տես էջ 9

zori.qxd 11/10/2013 20:57 Page 6



# Բաց նամակ

8-րդ էջից

կդառնա թուրքական: Եվ այնժամ (սա գուցե ամենակարեւորն է իմ բաց նամակում) Ռուսաստանի սահմանները կանցնեն սրտիս հարազատ Ռյազանի մարզով (ես ավարտել եմ Ռյազանի բժշկական ինստիտուտը): Դրանից վախենում են եւ իրանցիները, որոնք արդեն բացեիբաց սպառնում են Բաքվին վերանայել Գյուլիստանի եւ Թուրքմենչայի պայմանագրերը: Ուրմիա նահանգից պառլամենտի պատգամավորը պաշտոնապես նախազգուշացրեց Ադրբեջանի առաջնորդներին (որոնց երկիրը, նրա խոսքերով, գոյություն ունի ընդամենը 22 տարի՝ 1991 թվականից), որ եթե նրանք չհրաժարվեն իրենց հակաիրանական գործողություններից, ապա պառլամենտը կվերանայի երկու պայմանագրերն էլ: Եվ միաժամանակ ավելացրեց. «**Եթե հանրաքվե անցկացվի ադրբեջանցի այն բնակիչների շրջանում, որոնք համաձայն Գյուլիստանի եւ Թուրքմենչայի պայմանագրերի պայմանների անջատվել էին Իրանից, ապա նրանք կքվեարկեն այն բանի օգտին, որ նորից մտնեն Իրանի կազմ: Իսկ պատճառը մեկն է՝ միայն թե մի բան պատահելու դեպքում չհայտնվեն Թուրքիայում»:**

Վլադիմիր Վլադիմիրովիչ, շատ եմ խնդրում Ձեզ, եկեք ձեռքը սրտին դրած, անկեղծորեն եւ բացորոշ մտորենք այն դիլեմայի շուրջ, թե այդ ինչ փոխզիջման մասին կարող է խոսք լինել, եթե վաղը հանկարծ Մինսկի խումբը վճռի վերջապես ասել իր վերջնական խոսքը: Չէ՞ որ ըստ պատմական ճշմարտության տրամաբանության, եթե իսկական փոխզիջման մասին ենք խոսում, ապա մեր կոնկրետ դեպքում պետք է նկատի ունենալ նաեւ ողջ հայկական Նախիջեւանը (ողջ ինքնավար հանրապետությունը), Շահումյանի շրջանը, Ելիզավետպոլի գավառը, հայ մարշալների եւ գեներալների լեգենդար գյուղ Չարդախլուն եւ շատ այլ տարածաշրջաններ: Մի՞թե ինչ-որ մեկը ձեռքերը հուսահատ տարածելով կասի, թե Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունում արդեն հայեր չկան, այդ իսկ պատճառով էլ խնդիր չկա: Նորից հիշենք Ստալինին. «**Չկա մարդը, չկա խնդիրը**»:

Խորամուխ եղեք, խնդրեմ. նախկին ԽՍՀՄ տարածքում չկա ոչ մի ինքնավար կազմավորում, ընդհուպ փոքրիկ ազգային օկրուգներ, որտեղ բնիկ բնակչությունը դադարել է գոյություն ունենալ: Դա կատարվել է բացառապես միայն Ադրբեջանում: Ուրիշ ոչ մի տեղ: Եվ այդ կապակցությամբ՝ այդ ի՞նչ տարածքային ամբողջականության մասին է խոսքը, եթե, ինչպես մենք արդեն գիտենք, մինչեւ Հոկտեմբերյան հեղափոխությունը գոյություն չուներ ոչ մի Ադրբեջան: Մի՞թե պարզ չէ, որ բոլոր փոխզիջումների ցանկում պետք է ներառել բոլոր հայկական տարածքները, որոնք անօրինական կերպով մտած են արհեստականորեն ստեղծված միութենական հանրապետության կազմ: Ինչ վերաբերվում է կոնկրետ Ղարաբաղին, չի կարելի կուրորեն գերի մնալ Ստալինի հրեշավոր սադրանքին, որը բռնացիորեն ուժով վերանայեց ՀամԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թվականի հուլիսի 4-ի որոշումը եւ հուլիսի 5-ին լկտիաբար Ղարաբաղը «տվեց» Ադրբեջանին: Չէ՞ որ դա փաստաթուղթ է՝ անուններով, ազգանուններով: Փաստ է: Դա ճշմարտություն է:

Վտանգավոր եւ մեղսալի է ենթադրել, թե իբր այլեւս ոչինչ չես անի: Իբր այդ ամենը եղել է հեռավոր անցյալում: Մտածեք, խնդրում եմ, տեսանելի ապագայի մասին: Ինձ երբեմն թվում է, թե այդ Ձեզ, Մինսկի խմբի Ձեր գործընկերներին է տասնվեց դարերի խորքից դիմում մեծ պատմիչը,եպիսկոպոս Եղիշեն, Ավարայրի ճակատամարտի մասին (ճակատամարտ, որտեղ հայ ժողովուրդը արյան գնով կարողացավ պահպանել քրիստոնեությունը) իր գրքում բերելով հետեւյալ միտքը. «**Անցյալի մասին հիշողությունը դիտաշտարակ է, որից լավ երեւում է ապագան**»:

Եվ այնուամենայնիվ, այցելեք Ղարաբաղ, որտեղ ամեն մի սար ասես Եղիշեի դիտաշտարակը լինի: Բարձրացեք թեկուզ Գանձասար եւ Դուք կտեսնեք ապագան: Ի դեպ, Ղարաբաղի լեռների մասին: Չէ՞ որ Ստալինի եւս մեկ նենգամտությունն էր «իր» սահմանադրության մեջ Ղարաբաղն անվանել միայն Լեռնային: Այդպես ավելի հեշտ եւ «տրամաբանական» էր անհեթեթ սահմաններ անցկացնել՝ ողջ Ղարաբաղը պահելի ցածրադիր տարածքներից կտրելու համար: Գիտե՞ք, արդյոք, որ ողջ Ելիզավետպոլի գավառի, Գյուլիստանի երկրամասի եւ շատ տարածաշրջանների բնիկ տերերը խոսում են ղարաբաղյան բարբառով: Եվ այդ պահելի տարածքի վրա ադրբեջանցիների կողմից խորհրդային ժամանակներում, կրկնում եմ, քանդվել են հազարավոր հայկական եկեղեցիներ ու տաճարներ, թալանվել ու վերացվել են հազարավոր գերեզմանոցներ, միլիոնավոր խաչքարեր եւ տապանաքարեր օգտագործվել են որպես շինանյութ: Բայց, Վլադիմիր Վլադիմիրովիչ, հողն էլ հո մնացե՞լ է հայկական: Նրա մեջ է մեր ժողովրդի էությունն ու հոգին: Այն կազմված է իմ նախնիների հոգիներից եւ բազմամիլիոն կոնկրետ անուններով շիրիմներից: Իրանում, օրինակ, համենայնդեպս, ոչ ոք սրբապղծորեն չի անպատվել մեր հողը, մեր նախնիների ոգին: Շուրջերկրյա նավարկություն կատարելով «Արմենիա» առագաստանավով, ես Հայաստանի սահմաններից դուրս տեսել եմ հարյուրավոր հայկական գերեզմանատներ, այդ թվում եւ՝ մահմեդական երկրներում: Դրանք խնամքով պահպանվում են պետության կողմից:


*Հուշակոթող 1827 թ. օգոստոսի 17-ին Օշականի ճակատամարտում զոհված ռուս զինվորների հիշատակին*

Ինչ վերաբերում է ներկայիս հարաբերություններին Ռուսաստանի, Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջեւ, որն ունի սեփական սահմանադրություն, որտեղ հստակ որոշված են նրա այսօրվա սահմանները, ապա մենք պետք է պարզորոշ գիտակցենք. գլխավորը՝ չխախտել մեր նախնիների սուրբ սկզբունքները, որոնք երկար ու բազմաբարդ դարերի ընթացքում մշակել են հրաշալի համաստեղ պատվիրան՝ «Սիրո գինը սերն է»: Եվ միաժամանակ միշտ հիշենք, որ բարեկամության մեջ ամենակարեւորը, ամենաազնիվը, ամենաարժեքավորը սիրելն է, քան սիրված լինելը: Այդ մասին լավ եւ գործուն կերպով գիտեին ռուս եւ հայ ժողովուրդների մեծ որդիները, իսկական բարեկամներ եւ զինակիցներ Ալեքսանդր Գրիբոյեդովը եւ Խաչատուր Աբովյանը:

Վստահ եմ, Վլադիմիր Վլադիմիրովիչ, գիտակցված քննադատական ըմբռնումով կմերժեք ամեն տեսակի լկտի դատողություններն այն մասին, թե Հայաստանն իր «թվաբանական թուլությամբ» ի՞նչ կարող է անել, իբր՝ ոնց կասենք, այնպես էլ կանի: Պատմական ճշմարտությունն իրապես ցույց է տալիս, որ մենք միշտ էլ ունեցել ենք փրկիչ փոխկախվածություն: Իսկ այսօր՝ ինչպես երբեք:

Դուք ճիշտ եք նշել. «**Պատմական ճշմարտությունը խաթարելու փորձերը կարող են լուրջ հետեւանքներ ունենալ**»: Ընդ որում՝ հասկացնել եք տվել, որ պատմության նենգափոխումը հանգեցնում է հիվանդագին խառնաշփոթի՝ նոր սերունդների գլուխներում: Եվ ահա այստեղ Դուք հավելում եք ամենակարեւորը. «**Ըստ էության կարող են կասկածի տակ առնվել ժամանակակից աշխարհակարգի հիմնական սկզբունքները: Այստեղ թաքնված են շատ վտանգավոր սպառնալիքներ, այն էլ՝ անկանխատեսելի հետեւանքներով**»: Ես Ձեզ հետ լիովին համաձայն եմ, քանզի վերջին հաշվով խոսքը, ինչպես Սոբչակն էր ասում, Ռուսաստանի խնդրի մասին է, իսկ ինձ համար՝ նաեւ Ղարաբաղի խնդրի: Եվ, իհարկե, երբեք չի կարելի, նույնիսկ մեղք է շրջանցել ճշմարտությունը: Քանզի, եթե շրջանցես, ապա չես խուսափի դժբախտությունից, որն, ինչպես հայտնի է, միշտ վրա է հասնում մեզ մեր սեփական մեղքով:

Պետք է իմաստություն եւ արիություն հավաքել եւ, ինչպես Ժան Ժակ Ռուսոն էր ասում, ձեռքը դնելով «ազնիվ սրտին», անկեղծորեն խոստովանել, որ մեր ընդհանուր երկրի փլուզումն սկսվել էր Հոկտեմբերի արշալույսին, Գյուլիստանի եւ Թուրքմենչայի պայմանագրերի խախտումով: Արդեն այն ժամանակ նենգափոխում էին պատմությունը, չիմանալով, որ չափազանց բարձր է խաթարումներ չընդունող պատմական ճշմարտության գինն ու չափը: Եվ հաշվի առնելով, որ, ինչպես նույն Ռուսոն է ասել, «դեպի ճշմարտություն տանող ճանապարհը մեկն է», մենք բոլորս պետք է վերադառնանք այն միակ ճանապարհին, որն իր սկիզբն էր առել Ղարաբաղյան Գյուլիստանից: Պայմանագիրը, կրկնում եմ, ստորագրվել է հավերժական ժամանակների համար: Իսկ Ժամանակը, ի տարբերություն Տարածության, միայն մեկ չափում ունի՝ անցյալից ապագա, եւ անընդհատ հիշեցնում է մեզ. «**Եթե դուք գործուն կերպով չմտածեք ապագայի մասին, ապա այն պարզապես չեք ունենա**»:

1950-1960-ական թվականների վերջերին իմ սերունդը կլանված կարդում էր արեւմտյան գրականության դասականներին, որոնք դպրոցական ծրագրերում չկային: Գրքերը փոխանակում էինք, հերթ կանգնում: Մեզ թերի էինք զգում, եթե չէինք հասցրել կարդալ, ասենք, Էրիխ Մարիա Ռեմարկ կամ Էռնեստ Հեմինգուեյ: Շատ էին նրանք, այդ դասականները: Բայց ամենից խոր ես ընկալեցի Գոլսուորսիին: Դեռ նախքան էկրաններին կհայտնվեր «Ֆորսայթների պատմությունը» եռագրությունը, մենք կարդում էինք նրա վեպերը: Սակայն, ինչպես ասում են՝ ողջ մնացյալ կյանքի համար, պահպանվել է գործելու պարտավորեցնող մեկ հակիրճ, բայց տարողունակ նախադասություն: Ես այն հուշատետրիս մեջ գրի էի առել կես դար առաջ, Կամչատկայում, որտեղ որպես բժիշկ եմ աշխատել ամբողջ տասը տարի: Եվ ես շատ եմ ցանկանում, որպեսզի Դուք նույնպես հիշեք իմաստուն Գոլսուորսիի խորհուրդը. «Եթե դուք գործուն կերպով չեք մտածում ապագայի մասին, ապա այն չեք ունենա»:

Հաշվի առնելով, որ չափից ավելի բարձր է իմ հասցեատիրոջ հեղինակությունը, ես որոշեցի մեջբերումը ճշտել բնագրի հետ: Պարզվեց, որ Գոլսուորսին չի գրել «գործուն կերպով»: Մի՛ հանդիմանեք ինձ, Վլադիմիր Վլադիմիրովիչ, չէ՞ որ կես դար առաջ ես չգիտեի, որ ինչ-որ ժամանակ օգտագործելու եմ «Փարիսեցիների կղզու» հեղինակի իմաստուն միտքը: Պարզապես ես անկեղծորեն համոզված եմ, որ Ջոն Գոլսուորսին կհամաձայներ, որ եթե մտածում ես ապագայի մասին, ապա պետք է միայն ու միայն գործուն կերպով մտածես: Առավել եւս, երբ խոսքը Հայրենիքի ճակատագրի մասին է:

Անկեղծ հարգանքով
ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

*Հ.Գ. Փորձից գիտեմ, որ այս նամակի հրապարակումից անմիջապես հետո Ադրբեջանի ղեկավարությունն անպայման որպես սեփական փաստարկ կբերի իմ «Օջախ» գիրքը (1981 թ.), որն ի դեպ նվիրված է Ռուսաստանի հետ Արեւելյան Հայաստանի միավորման 150 ամյակին: Այդ գրքում, օրինակ, ես պատմում եմ, թե ինչպես են ադրբեջանցիները խորհրդային ժամանակներում լիովին ավերել բոլոր հայկական բնակավայրերը, բոլոր հայկական հուշարձանները, այդ թվում եւ բուն Նախիջեւանում: Երկրի երեսից ջնջել են հայ ճարտարապետության պարծանք Ագուլիս քաղաքը, որտեղ Մեսրոպ Մաշտոցի ժամանակներից վեր էին խոյացել ավելի քան տասը անկրկնելի տաճարներ եւ եկեղեցիներ: Եվ Ագուլիսի մասին էլ ես մանրամասնորեն գրել էի անթաքույց ցավով: «Օջախ»-ի բոլոր օրինակները Բաքվում հրապարակավ այրեցին: Այս օրինակը բերում եմ այն պատճառով, որ երեք տասնամյակ անց նույն Բաքվում այրեցին արդեն ադրբեջանցի գրող Աքրամ Այլիսլիի գիրքը, ճակատագրի հեգնանքով դարձյալ հայկական Ագուլիս քաղաքի ողբերգության մասին մի դրվագի պատճառով:*

*...Չհավատա՛ք, եթե որպես արձագանք ասեն, թե ես պայթեցրել եմ Բաքվի մետրոն եւ գտնվում եմ միջազգային հետախուզման մեջ: Ինտերպոլի գլխավոր քարտուղար Ռոնալդ Նոբլը պաշտոնապես ներողություն է խնդրել ինձանից իր այն մեղքի համար, որ հենց սկզբից ուշադիր չի ստուգել ստահոդ փաստաթղթերը:*

*...Չհավատաք, եթե Ձեզ ասեն, թե ես մի ինչ-որ գիրք եմ գրել՝ նողկալի վայրագությունների նկարագրություններով (կտան գրքի վերնագիրը, հրատարակչության անունը, էջերը, նույնիսկ բազմաթիվ չակերտավոր մեջբերումներ, եւ այդ ամենը՝ համացանցում): Պարբերաբար «իմ գրքի» էջերը հնչեցնում են Բաքվում, արտասահմանում, ԵԽԽՎ-ի ամբիոնից: Թվեր են ներկայացնում «իմ» գոյություն չունեցող գրքից: Դա անպատիժ կերպով շարունակվում է երկար տարիներ: Ես լիովին համոզված եմ, որ մարդկությունն ինչ-որ ժամանակ լրջորեն կզբաղվի համացանցով: Բայց դա այլ խոսակցություն է: Իսկ առայժմ շատերն են հավանաբար հավատում այդ բարբաջանքին: Խնդրում եմ, պահանջեք, թող Ձեզ ցույց տան այդ գրվածքի թեկուզ մեկ օրինակ: Այդ ամենի մասին ես գրել եմ հոդված՝ «Զրպարտանքը հաղթում են միայն արհամարհանքով» (փոխառել եմ մի իմաստուն կնոջից՝ Ֆրանսուազա Մոնտենենից, որը Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ի երեխաների դաստիարակն էր) Մոսկվայի «Պոլիտիկա» պարբերականում եւ «Լիտերատուրնայա գազետա»-ում: Բնականաբար՝ ոչ մի պատասխան զրպարտիչներից: Մեկ-երկու տարի լռեցին եւ նորից սկսեցին նույն զառանցանքը տեղադրել համացանցում:*

*Նման «փաստարկների» ցանկը կարելի է երկար շարունակել:*

*...Ներեցեք ինձ, մեծարգո Վլադիմիր Վլադիմիրովիչ, եւս մեկ անգամ, հարկադրված պահելի ծավալի այս նամակիս համար: Ներեցեք անհանգստության համար: Շատ եմ ցանկանում հավատալ, որ Դուք կհասկանաք ինձ: Ես չէի կարող լռել:*

Անկեղծ հարգանքով
ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

ԱԶԳ



ՀԱԿԻՐՃ

## «Երեւանյան հեռանկարներ» փառատոնը Բյուրականում կբացի նոր ակադեմիա

Բյուրականում հաջորդ տարի բացվելու է «Երեւանյան հեռանկարներ» փառատոնի երաժշտական միջազգային ակադեմիան, որի մասին բազմիցս տեղեկացրել ենք:

Փառատոնի գլխավոր մենեջեր Սոնա Հովհաննիսյանն «**Ազգի**» հետ զրույցում ասաց, որ ընտրել են հենց Բյուրականը, քանի որ այն առանձնանում է ոչ միայն իր բնությամբ, այլեւ՝ ունի ակադեմիական գյուղ, արդեն իսկ ձեւավորված գիտական միջավայր:

Անդրադառնալով շենքի կառուցման ընթացքին եւ կառուցվածքին, Սոնա Հովհաննիսյանն ասաց, որ այդ հարցում իրենց ոչ ոք չի օգնել, այդ իսկ պատճառով էլ աշխատանքները դանդաղ են ընթանում, սակայն շինարարության 90 տոկոսն արդեն արվել է: Շենքն ունի 80 հոգու համար նախատեսված դահլիճ:

Ինչպես մի առթիվ ասել էր փառատոնի գլխավոր մենեջերը, ակադեմիայի ստեղծման նպատակն է ապահովել շփում համաշխարհային ճանաչում ունեցող երաժիշտների, ստեղծագործողների միջեւ:

Նա նշեց, որ եվրոպայում կոնսերվատորիաներում դասավանդող ճանաչում ունեցող արվեստագետները ողջ կիսամյակի ընթացքում 10-12 անգամ են հանդիպում իրենց ուսանողների հետ, իսկ ահա այստեղ ընդամենը 10-12 օր աշխատելով ուսանողներին կփոխանցեն համարյա թե նույնքան գիտելիք, որքան եվրոպական կոնսերվատորիաներում:

Մ. Հ.

## Երիտասարդական նվագախումբը՝ նոր համերգով



Արամ Խաչատրյան համերգասրահում հոկտեմբերի 17-ին տեղի կունենա Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան), Ալեքսանդր Ռոմանովսկու (դաշնամուր, Ուկրաինա/Իտալիա), Հայկ Գազազյանի (ջութակ, Հայաստան/Ռուսաստան) եւ Հայկ Խաչատրյանի (կոնտրաբաս, Շվեյցարիա/Հայաստան) համատեղ համերգը:

Համերգն անցկացվում է Արամ Խաչատրյանի անվան միջազգային հոբելյանական փառատոնի:

Համերգի ընթացքում կհնչեն Սերգեյ Պրոկոֆեւի, Յան Սիբելիուսի, Սերգեյ Կուսեվիցկու ստեղծագործությունները:

Նշենք, որ Հայաստանի երիտասարդական նվագախումբն ամբողջ տարվա ընթացքում ե՛ւ Հայաստանում, ե՛ւ հանրապետության սահմաններից դուրս ներկայացնում է Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները դրանք ներգրավելով ինչպես հայ, այնպես էլ աշխարհում ճանաչում ունեցող մենակատարների:

Մ. Հ.

## Խաչատրյանական համերգաշար՝ Սինգապուրում, Հարավային Կորեայում եւ Ճապոնիայում

Արամ Խաչատրյանի ծննդյան 110-ամյակի հոբելյանական ծրագրի շրջանակներում հոկտեմբերի 10-15-ը Սինգապուրում, Հարավային Կորեայում եւ Ճապոնիայում կանցկացվի խաչատրյանական համերգաշար անվանի երաժիշտներ Արմեն Բաբախանյանի, Արամ Թալալյանի եւ Ջուլիետա Վարդանյանի մասնակցությամբ:

Սինգապուրում համերգը կկայանա չինական միջազգային դպրոցի դահլիճում, Հարավային Կորեայում հոկտեմբերի 13-ին, Սուվոնի միջազգային դպրոցի համերգասրահում, Ճապոնիայում՝ հոկտեմբերի 15-ին, Գինզա կենտրոնական թաղամասի Օջի համերգասրահում:

Նշենք, որ համերգաշարը կազմակերպվում է մշակույթի նախարարության, արտաքին գործերի նախարարության, Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում եւ Ճապոնիայում ՀՀ դեսպանությունների աջակցությամբ:

Մ. Հ.

## Տոն՝ ջազի սիրահարների համար

Հոկտեմբերի 23-30 Երեւանում տեղի կունենա ջազի շաբաթ՝ Հայաստանում ջազի 75-ամյակին նվիրված, որը կկրի «Արմ ջազ ուիք» խորագիր:

Հոկտեմբերի 24-ին Թավիջյան եղբայրները, իսկ հոկտեմբերի 25-ին՝ Մայք Մոսեսյանը հանդես կգան մենահամերգներով:

Իսկ ահա հոկտեմբերի 26-ին ելույթ կունենա «Չիկո եւ ընկերներ» եւ Ջամսեսիոն ջազ բենդը: Հոկտեմբերի 27-ին տոնական երեկոն իրենց ելույթներով կզարդարեն Անուշիկ Ալավերդյանն ու «Կարեն Մամիկոնյան բենդը»: Ջազի շաբաթվա շրջանակում ելույթ կունենան նաեւ «Նյուանս» էթնո-ջազ խումբը եւ Մարինե Հակոբյանն ու «Ֆրի ֆորմ» ջազ բենդը:

## Գաֆէսճեան արվեստի կենտրոնը հայտարարում է «Դագ Արգյու. գեղանկարներ հավերով» ցուցադրության բացումը

«Դագ Արգյու. գեղանկարներ հավերով» ցուցադրության հանդիսավոր բացումը կկայանա այսօր, ժամը 18:00-ին, Գաֆէսճեան արվեստի կենտրոնի «Արծիվ» սրահում: Ցուցադրությունը ներկայացնում է ժամանակակից ամերիկացի արվեստագետ Դագ Արգյուի չորս մոնումենտալ ստեղծագործությունները, այդ թվում նրա հայտնի «Անանուն» հավերով գեղանկարը:

Դագ Արգյուն իր կտավների երկչափ հարթության սահմաններում ձգտում է պատկերել անսահմանությունը՝ ստեղծելով մեծադիր կտավներ, որոնցում սովորական օբյեկտները ներկայանում են մոնումենտալ եւ վերաիմաստավորված կերպերով՝ արտահայտելով ժամանակակից սոցիումի բազմաշերտ իրականությունը:

Ջերարդ Լ. Գաֆէսճեան հավաքածուին պատկանող «Անանուն» հավերով գեղանկարը եւ երեք հավերի դիմանկարները ներկայացնում են Դագ Արգյուի ստեղծագործական կարեւորագույն շարքերից մեկը: Բծախնդրորեն պատկերված անհեթեթ կեցվածքներով կենդանիները իրենց գերիշխող ներկայությամբ ներխուժում են դիտողին ստեղծագործությունների լայնիմաստ ենթատեքստի մեջ:

«Մինչ Հայաստան ժամանելը, «Անանուն» հավերով գեղանկարը հանրային բուռն քննարկումների էր արժանացել Ուայզմեն արվեստի թանգարանում, երբ Ջերարդ Գաֆէսճեանը 1995 թվականին այն ցուցադրության էր հանձնել Մինեսոտայի համալսարանին: Համոզված ենք, որ Դագ Արգյուի աշխատանքները հայ հանրության համար ժամանակակից ամերիկյան արվեստի նոր միտումներ կբացահայտեն», - նշեց Գաֆէսճեան արվեստի կենտրոնի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վահագն Մարաբյանը:

Ցուցադրության հանդիսավոր բացման մուտքը՝ հրավիրատոմսերով:

«Դագ Արգյու. գեղանկարներ հավերով» ցուցադրության հանրային բացումը տեղի կունենա հոկտեմբերի 13-ին ժամը 10:00-ին: Այդ օրը մուտքը «Արծիվ» սրահ կլինի անվճար: Ցուցադրությունը կտեւի մինչեւ դեկտեմբերի 29-ը:

## Գրիգոր Քյոսեյանի «Երգիծանկարներ» հատորը

Մեկենասությամբ դոկտ. Գեւորգ եւ տիկ. Սեսիլ Քեշիշյանների, «Մայրենի» հրատարակչությունը (ԱՄՆ) լույս է ընծայել բոստոնաբնակ հրապարակագիր, խմբագիր եւ երգիծանկարիչ Գրիգոր Քյոսեյանի (Քէօսէեան) «Երգիծանկարներ» հատորը, տեղեկանում ենք մի փոքր ուշացումով մեր ձեռքը հասած եգիպտահայ համայնքի հնագույն «Արեւ» եռօրյայից:

Թեքեյան մշակութային միության Լոս Անջելեսի վարչության նախաձեռնությամբ ԹՄՄ Պեշկյոթուրյան կենտրոնում կայացել է հատորի շնորհանդեսը, որի բացման խոսքը կատարել է վարչության ատենապետ Վաչե Սեմերճյանը: Հատորը ներկայացրել է ԹՄՄ Կենտրոնական վարչության անդամ, «Արմինյն Օբզերվըր» շաբաթաթերթի խմբագիր պրոֆ. Օշին Քեշիշյանը: «Այս գիրքը միայն արվեստ չէ, այլ համայնքի պատմություն: Քյոսեյանի գործերը քաղաքական երգիծանքի ժանրին են պատկանում եւ նրա «գծերը» նույնքան ուժեղ են, որքան նրա «գրերը», ասել է նա: Շնորհակալական խոսքերով հանդես է եկել եւ ներկաների հարցերին պատասխանել հարգի հեղինակ Գրիգոր Քյոսեյանը, որն ի մասնավորի ասել է. «Երգիծանկարիչը պետք է անկախ լինի, բայց ոչ չեզոք»: Անդրադառնալով միջազգային ճանաչման արժանացած Ալեքսանդր Սարուխանին, նա ասել է. «Սարուխան մեր պապն է: Սրամիտ էր, քննադատ, ազգային կյանքը լավ էր ճանաչում: Միայն «ընկեր Փանջունիի» իր երգիծական նկարազարդումները բավական են, որ մենք արժեւորենք իր մեծությունն այսօր»:

Շարունակելով իր խոսքը, նա նշել է, որ 88 էջանոց հատորում տեղ չեն գտել միջազգային մամուլում տպագրված գործերը:

Վաչե Սեմերճյանի փակման խոսքով ավարտվել է երեկոն:

Հ. Ծ.

## Վուդի Ալենի նոր՝ «Ժասմին» կինոնկարի ցուցադրությունը չեղյալ է հայտարարվել

Ինչպես հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը, չեղյալ է հայտարարվել ամերիկացի ռեժիսոր Վուդի Ալենի նոր՝ «Ժասմին» կինոնկարի ցուցադրությունը, որ պետք է ցուցադրվեր այս շաբաթ Հնդկաստանում: Այդ որոշումը կայացրել է ինքը՝ ռեժիսորը, ի նշան բողոքի հակածխախոտային օրենքի դեմ, որը ներառում է նաեւ պայքար ծխելու դեմ ֆիլմերում:

2011 թ. նոյեմբերին Հնդկաստանում ուժի մեջ մտան այն կանոնները, ըստ որոնց՝ ցուցադրվող ֆիլմում ծխելու հետ կապված յուրաքանչյուր դրվագ պետք է ուղեկցվի նիկոտինից կախվածության վնասների մասին ենթագրերով: Իսկ նման տեսարաններ բովանդակող կինոնկարը սկսվելուց առաջ պետք է ցուցադրվի համապատասխան 30-վայրկյանանոց տեսահոլովակ:



Այսուհանդերձ, Վուդի Ալենը համարում է, որ նման միջոցները շեղում են մեզ այն ամենից, ինչ տեղի է ունենում էկրանին:

Ի դեպ, 2008 թ. հոկտեմբերին Հնդկաստանում արգելեցին ծխելը հասարակական վայրերում, սիգարետների տուփերին հայտնվեցին համապատասխան մակագրություններ, ավելի ուշ՝ հակագովազդային նկարներ ծխելու վնասների մասին: Կինոյում հակածխախոտային կանոնները կատարելուն հետեւում է Ֆիլմերի հավաստագրման կենտրոնական խորհուրդը: Առանց այդ պետական կանոնակարգող մարմնի թույլտվության հնդկական էկրաններ ոչ մի կինոնկար չի բարձրանում:

«Ժասմին» ֆիլմում, որում խաղում են Քեյթ Բլանշետը, Սալլի Հոքինսը եւ Ալեք Բոլդուինը, ծխող պերսոնաժներով երկու դրվագ կա:

Մ. Հ.

## Հարություն Խաչատրյանը՝ «360՛» միջազգային կինոփառատոնի ժյուրիի նախագահ

Այս օրերին Մոսկվայում տեղի է ունենում «Երեք հարյուր վաթսուն աստիճան» արդի գիտական ֆիլմերի երրորդ միջազգային փառատոնը, որի ժյուրին կնախագահի Հայաստանի ժողովրդական արտիստ, կինոռեժիսոր Հարություն Խաչատրյանը: Այս մասին Panorama.am-ին տեղեկացրել են «Ոսկե ծիրան» փառատոնի մամուլի ծառայությունից:

«Սա հրաշալի առիթ է «Ոսկե ծիրան» եւ «Երեք հարյուր վաթսուն աստիճան» միջազգային կինոփառատոների փոխհարաբերությունների ամրապնդման եւ մոտ ապագայում համատեղ ծրագրերով ներկայանալու համար»,- համոզված են «Ոսկե ծիրան» փառատոնի կազմակերպիչները:

«Երեք հարյուր վաթսուն աստիճան» փառատոնն անց է կացվում Մոսկվայի կառավարության հովանու ներքո: Առաջնային նպատակն է գիտության եւ գիտական աշխատանքի վերաբերյալ հեղինակային վավերագրական ֆիլմերի հավաքագրումն ու ներկայացումը: Փառատոնի չորս մրցութային ծրագրերում ընդգրկված ֆիլմերը վավերագրական պատմություններ են՝ գիտություն-իրականություն, գիտություն-կյանք շղթայական փոխհարաբերությունների եւ անհատների կենսակերպի վերաբերյալ: Հազարավոր կինոփառատոներով հարուստ ժամանակակից կինոաշխարհում՝ իր ուրույն ուղղվածությամբ առանձնացող այս փառատոնն արդեն իսկ մեծ հեղինակություն է վայելում մասնագետների եւ հանդիսատեսների շրջանակներում:

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# Մարզական

## Երկար սպասված ռեւանշը կայացավ

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը 2014-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում վերջապես Երեւանում վայելեց հաղթանակի բերկրանքը՝ բուլղարացիների հետ չափազանց լարված ու սկզբունքային մրցավեճում առավելության հասնելով 2-1 հաշվով: Հանդիպումը մեծ հետաքրքրությամբ էր սպասվում՝ հաշվի առնելով մեր ֆուտբոլիստների ռեւանշի հասնելու բուռն ձգտումը, որոնք ցանկանում էին վրեժխնդիր լինել բուլղարացիներից նախորդ տարի Սոֆիայում տեղի ունեցածի համար: Եվ դա մեր հավաքականին հաջողվեց:



ՖՈՏՈԼՈՒՐ

Այս անգամ հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը մեկնարկային կազմում ընդգրկել էր երկու հարձակվողների՝ Յուրա Մովսիսյանին եւ Արթուր Սարկիսովին: Յուրան գործում էր հարձակման կենտրոնում, իսկ Արթուրը՝ աջից: Իսկ ահա Արաս Օզբիլիսը եզրից տեղափոխվել էր ենթահարձակվողի գոտի եւ գործում էր կենտրոնում: Առաջ անցնելով նշենք, որ բուլղարացիների հետ մրցավեճում Օզբիլիսն իրեն գերազանց դրսեւորեց՝ աչքի ընկնելով վարպետ խաղով եւ տեխնիկական պատրաստվածությամբ: Հենց նրա ջանքերի շնորհիվ էլ ծնվեց հանդիպման առաջին գոլը: 45-րդ րոպեին նրա գերազանց անցումը արգելված հնարքով կանգնեցրեց Նիկոլայ Բոդուրովը, որի համար կարմիր քարտ ստացավ ու հեռացվեց խաղադաշտից: Իսկ Արաս Օզբիլիսը շատ հմտորեն իրացրեց նշանակված տուգանայինը՝ գեղեցիկ ու խաբուսիկ հարվածով գնդակն ուղարկելով դարպասի վերին անկյունը: Ցավոք, վնասվածքի պատճառով Օզբիլիսը 2-րդ խաղակեսի սկզբում փոխարինվեց, ինչը մեծ կորուստ էր մեր հավաքականի համար:

Նշենք, որ մինչ այդ էլ առաջին վտանգավոր պահը մեր ֆուտբոլիստները ստեղծել էին հենց Օզբիլիսի ջանքերով: 19-րդ րոպեին տուգանային հրապարակի մատույցներից նրա հուժկու հարվածից հետո բուլղարացի դարպասապահը մեծ դժվարությամբ հեռացրեց գնդակը:

Բուլղարացիներն էլ այս խաղում բավականին ակտիվ էին ու փորձում էին արդյունքի հասնել, ինչը նրանց համար շատ կարեւոր էր մրցաշարային աղյուսակի 2-րդ տեղում ամրապնդվելու համար: Սակայն մեր պաշտպաններն ու դարպասապահը վստահ էին գործում: Ճիշտ է, 36-րդ րոպեին հյուրերին հաջողվեց սպառնալ մեր դարպասին, սակայն Բերեզովսկին փրկեց դրությունը:

Երկրորդ խաղակեսի սկզբնամասում մեր պաշտպանությունը կարծես ճեղքվածք տվեց: Հյուրերը մի քանի վտանգավոր պահ ստեղծեցին եւ կարող էին վերականգնել հավասարակշռությունը, սակայն հաջող խաղաց Բերեզովսկին: Իսկ ահա հակագրոհներից մեկի ժամանակ Արթուր Սարկիսովը կարող էր վճռել հանդիպման ելքը, սակայն նպաստավոր դիրքից կատարած նրա հարվածը հետ մղեց դարպասապահը: Բուլղարացիներին ի վերջո հաջողվեց 60-րդ րոպեին Իվելին Պոպովի տուգանային հիանալի հարվածի շնորհիվ հավասարեցնել հաշիվը: 3 րոպե անց 2-րդ դեղին քարտը ստանալով, խաղադաշտը թողեց Սվյատոսլավ Դյակովը: Բուլղարացիները մնացին 9 հոգով՝ հայտնվելով չափազանց ծանր իրադրությունում: Մեր ֆուտբոլիստները հիանալի հնարավորություն ստացան հաղթանակ կորզելու: Կարող էին աչքի ընկնել Մարկոսը, Մխիթարյանը, սակայն նրանց հարվածները բարձր էին:

Վերջապես խաղավարտից 3 րոպե առաջ Հայաստանի հավաքականը հասավ բաղձալի արդյունքի: Մխիթարյանի հիանալի փոխանցումից հետո տուգանային հրապարակ ներխուժած Յուրա Մովսիսյանը հաղթական վերջակետ դրեց այդ լարված ու դրամատիկ հանդիպմանը: Հայաստանի հավաքականը ընտրական մրցաշարի երեւանյան վերջին խաղում իր առաջին հաղթանակը տոնեց:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքներն արտահայտեցին:

**Վարդան Մինասյան** (Հայաստան) - Խաղի նախօրեին նշել էի, որ ինձ համար կարեւորը հանդիպման արդյունքն է, իսկ մնացածը էական չէ: Առաջին խաղակեսում մրցակցի ստացած կարմիր քարտը նույնիսկ խանգարեց մեզ, քանի որ ֆուտբոլիստները կարծեցին, թե ընդմիջումից հետո ավելի հեշտ է լինելու: Սակայն ես նրանց զգուշացրել էի, որ թվային առավելությունը դեռ չի նշանակում, որ հաղթանակն ապահոված է: Սարկիսովն ու Ղազարյանը եզրերում լավ չէին գործում, ինչի արդյունքում վտանգավոր գոտիներ շատ էին բաց թողնում: Յուրայի խաղային որակներին բոլորդ էլ ծանոթ եք. նրան տարածություն է պետք: Այսօր բուլղարացիները նրան նման հնարավորություն չէին ընձեռում: Փառք Աստծո, որ սադրանքների չգնացինք: Չեմ բացառում, որ Իտալիային հաղթելու հնարավորություններ կան, չնայած նրանք էլ պայքարելու են իրենց վարկանիշի համար:

**Լյուբոսլավ Պենեւ** (Բուլղարիա) - Շնորհավորում եմ իմ ֆուտբոլիստներին, նրանք 9 հոգով էլ լավ խաղացին: Դա փաստ է: Այս պարտությունից հետո 2-րդ տեղը գրավելու մեր հնարավորությունները նվազեցին: Հայաստանի հավաքականը 15-րդ րոպեին պետք է 10 հոգով մնար: Զարմացած չեմ նման մրցավարությունից: Ամբողջ ընտրական մրցաշարում էր այդպես: Երկար ենք մտածել եւ եկել ենք այն եզրակացության, որ Բուլղարիան լուրջ մրցակից է բոլորի համար: Այդ պատճառով էլ մրցավարները մեր դեմ են սուլում: Խաղի մասին կարող եմ ասել, որ լավ էինք խաղում, ավելի շատ գոլային պահեր ստեղծեցինք նույնիսկ 10 եւ 9 հոգով: Մենք արժանի էինք հաղթելու, բայց մեզ թույլ չտվեցին դա անել:

## Պերուի ֆեդերացիան Սերխիո Մարգարյանին փոխարինող է փնտրում

**Բացառված չէ, որ Պերուի ֆեդերացիան պաշտոնանկ անի երկրի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ, ուրուգվահայ Սերխիո Մարգարյանին: Պերուի հավաքականը նրա գլխավորությամբ աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում 7-րդ հորիզոնականում է եւ այլեւս հնարավորություն չունի պայքարելու եզրափակիչի ուղեգրի համար:**



**Ներկայումս ֆեդերացիայի հետ բանակցում է արգենտինացի մասնագետ Ռիկարդո Գարեկան: Նրա գլխավորությամբ Պերուի «Ունիվերսիտարը» 2007/08-ին դարձել է երկրի չեմպիոն: Ներկայումս նա գլխավորում է արգենտինական «Վելես Սարսֆիլդը», որը վերջին 3 տարիներին չեմպիոն է հռչակվել: Ակումբի հետ պայմանագրի ժամկետը լրանում է այս տարեվերջին:**

### ՇԱԽՄԱՏ

## Արոնյանը վերջապես վայելեց հաղթանակի բերկրանքը




**Բիլբաոյում ընթացող շախմատի «Մեծ սաղավարտ» մրցաշարի 2-րդ շրջանը հաղթանակով սկսեց Լեւոն Արոնյանը: Առաջին շրջանում գրանցած 3 անընդմեջ ոչ-ոքիներից հետո Լեւոնը վերջապես ճաշակեց հաղթանակի քաղցրությունը՝ սեւերով 56-րդ քայլին ստիպելով հանձնվել ֆրանսիացի գրոսմայստեր Մաքսիմ-Վաշիե Լագրավին: Հետաքրքրական է, որ մրցաշարում գրանցված արդյունավետ բոլոր պարտիաներին էլ մասնակցել է Վաշիե-Լագրավը: Նա պարտվել էր նաեւ անգլիացի Մայքլ Ադամսին, հաղթել՝ Շահրիյար Մամեդյարովին: Վերջինս Ադամսի հետ 4-րդ տուրի պարտիան ավարտեց ոչ-ոքի:**

**Այս հաղթանակի շնորհիվ Լեւոն Արոնյանը վաստակեց 6 միավոր եւ Մայքլ Ադամսի հետ գլխավորեց աղյուսակը: Վաշիե-Լագրավը ունի 4 միավոր, Մամեդյարովը՝ 3:**

**5-րդ տուրում Արոնյանը սեւերով կխաղա Ադամսի հետ: Այդ պարտիան կարող է վճռորոշ լինել մրցաշարի հաղթողին որոշելու հարցում: Իսկ ավարտական տուրում Արոնյանի մրցակիցը կլինի Մամեդյարովը:**

## Հակոբյանն առաջին պարտությունը կրեց

**Միխայիլ Չիգորինի հուշամրցաշարի 6-րդ տուրն անհաջող էր Վլադիմիր Հակոբյանի համար, որն առաջին պարտությունը կրեց: Նրա մրցակիցը Դմիտրի Կոկարեւն էր: Հակոբյանը 4,5 միավորով նահանջեց 14-րդ հորիզոնական, իսկ Կոկարեւը Մաքսիմ Մատլակովի հետ գլխավորեց աղյուսակը:**

**4,5 միավոր է վաստակել նաեւ գրոսմայստեր Ռոբերտ Հովհաննիսյանը, որը պարտության մատնեց Մարկ Ցեյթլինին: 4 միավոր ունի Վահե Բաղդասարյանը, որն առավելության հասավ Եվգենի Պլետնեւի նկատմամբ: Զավեն Անդրեասյանը պարտվեց Ալեքսեյ Մոկշանովին եւ 3,5 միավորով նահանջեց 74-րդ հորիզոնական: Աննա Հայրապետյանն ու Արմեն Անտինյանն ունեն 3-ական միավոր:**

## Հաղթական մեկնարկ

**Ջակարտայում մեկնարկած շախմատի Ինդոնեզիայի բաց առաջնության 108 մասնակիցների թվում է Հայաստանի ներկայացուցիչ Ավետիք Գրիգորյանը: Նա հաղթանակով մեկնարկեց՝ շահելով ինդոնեզացի Տիրտոյի հետ մրցախաղը:**

## Թոռները դատի են տվել Պելեին

Ֆուտբոլի արքա Պելեի թոռները որոշել են դատարանի միջոցով իրենց հանրահայտ պապից որոշակի գումար ստանալ: 13 եւ 15-ամյա պատանիները 6-հազարական դոլար են պահանջում որպես բժշկական ապահովագրման եւ կրթության ծախսերի փոխհատուցում: Ըստ որում, նրանց փաստաբանը պնդում է, որ Պելեն մշտապես մերժել է իր թոռների պահանջը: Վերջին անգամ նրանք իրենց պապու հետ հանդիպել են 2011-ին:

Պատճառն այն է, որ այդ պատանիները Պելեի արտամուսնական հարաբերությունների արդյունքում ծնված դստեր՝ Սանդրա Ռեգինայի որդիներն են: Վերջինս 2006-ին մահացել է: Պելեն երկար ժամանակ չէր ցանկանում Սանդրային որպես իր դուստր ճանաչել ու խուսափում էր նրա հետ հանդիպումից:

## Վանաձորցի հանդբոլիստներն ուժեղագույնն են

ՖԻՄԱ-ի մարզադահլիճում վերջնագիծը հատեց ուսանողական մարզական խաղերի ծրագրով հանդբոլի մրցաշարը, որին մասնակցեցին 6 թիմեր:

Չեմպիոնի տիտղոսի համար համառ պայքար ծավալվեց Վանաձորի մանկավարժական համալսարանի եւ Երեւանի ճարտարագիտական համալսարանի թիմերի միջեւ: Նրանց հանդիպումը կայացավ մրցաշարի վերջին օրը: Իսկ մինչ այդ 2 թիմերն էլ հաղթանակներ էին տոնել անցկացրած հանդիպումներում:

Վճռորոշ խաղում էլ վանաձորցիներն առավելության հասան մրցակցի նկատմամբ: Հաղթելով 36-29 հաշվով, Վանաձորի մանկավարժական համալսարանի թիմը դարձավ մրցաշարի հաղթող՝ պարգեւատրվելով գավաթով: 3-րդ մրցանակակիրը եւս որոշվեց ավարտական տուրում: Երեւանի պետական համալսարանի թիմը 19-17 հաշվով հաղթեց Արցախի պետական համալսարանի թիմին ու գրավեց 3-րդ տեղը: Հիշեցնենք, որ ԵՊՀ-ի թիմը ուսանողական նախորդ խաղերի հանդբոլի մրցաշարի չեմպիոնն էր:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Ռասմուսեն. «ՆԱՏՕ-ն Սիրիայում անելիք չունի»

## *Պենտագոնն առաջարկեց քիմիական զենքի ոչնչացման լաբորատորիաներ*



ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենը հայտարարել է, որ ինքը Սիրիայի հակամարտության մեջ ՆԱՏՕ-ի համար որեւէ դեր չի տեսնում: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

«Այդ հակամարտությունը չունի ռազմական լուծում», ընդգծել է Ռասմուսենը: Նա Սիրիայի կառավարությանը եւ ընդդիմության կոչ է արել մասնակցել նոյեմբերին Ժնեւում նախատեսված հաշտության միջազգային կոնֆերանսի աշխատանքին:

Գործակալությունը հիշեցնում է, որ օգոստոսի երրորդ տասնօրյակում Դամասկոսի արվարձանում քիմիական զենքի կիրառումից հետո Ռասմուսենը «միջազգային կոշտ հակազդեցության» կոչ էր արել: Նախքան սեպտեմբերի վերջերին Սիրիայի քիմիական զենքի ոչնչացման ծրագրի համաձայնեցումը, Ռասմուսենը չէր բացառում ռազմական միջամտության հնարավորությունը:

Իր հերթին Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ ԱՄՆ-ի պաշտպանության նախարարությունը առաջարկել է ամերիկյան շարժական լաբորատորիաներ օգտագործել Սիրիայի քիմիական զենքի պաշարների ոչնչացման նպատակով:

Տվյալ սարքավորումները հնարավոր կլինի օգտագործել լոկ այն դեպքում, եթե թունանյութերը պահվում են ոչ թե պատրաստի տեսքով, այլ համեմատաբար անվնաս բաղադրիչների ձեւով, որոնք թունավոր են դառնում միայն խառնվելուց հետո: Մինչդեռ պատրաստի թունանյութերով զինամթերքի ոչնչացման համար կպահանջվեն մշտակա ձեռնարկություններ:

Ամերիկացիների առաջարկած լաբորատորիաները կարող են հանդերձավորվել սեղմ ժամկետներում եւ աշխատանքը սկսել հակազդակների պահպանության վայր հասնելուց 10 օր հետո: ECBC ընկերության մշակած կայանքները կարող են գործել օր ու գիշեր: Դրանց արտադրողականությունն օրական մոտավորապես 25 տոննա է:

Հաագայում գործող Քիմիական զենքի արգելման կազմակերպությունը ներկայումս հակված է այն մտքին, որ զինամթերքը եւ թունանյութերը պետք է ոչնչացվեն Սիրիայում, քանի որ արտերկիր տեղափոխելը կառաջացնի հավելյալ բարդություններ: Պենտագոնի առաջարկած սարքավորումների հնարավոր առաքման վերաբերյալ կազմակերպությունը պետք է որոշում ընդունի մինչեւ նոյեմբերի 15-ը: Եթե ինչ-ինչ պատճառներով հարկ լինի դրանցից հրաժարվել, ապա նախքան նոյեմբերի 15-ը պետք է ներկայացվի քիմիական զինանոցի ոչնչացման այլընտրական ծրագիր:

# 28 տարվա ազատազրկում՝ Դետրոյթը սնանկացրած նախկին քաղաքապետին

Դետրոյթի նախկին քաղաքապետ Քվեյմ Քիլպատրիկը 28 տարվա բանտարկության է դատապարտվել կաշառակերության համար: Հոկտեմբերի 11-ին այսպիսի վճիռ է կայացրել ԱՄՆ-ի ավտոմոբիլային մայրաքաղաքի դատարանը: Անցած ամռանը քաղաքի իշխանությունները սնանկացման հայց էին ներկայացրել Վաշինգտոնին:



«Նյու Յորք թայմս» թերթը հաղորդում է, որ դատավճռի հրապարակումից հետո Դետրոյթի նախկին քաղաքապետը ընդունել է իր պատասխանատվությունը քաղաքի ներկայիս աղետալի վիճակի համար:

Դեռ մարտ ամսին երդվյալների դատարանը 43-ամյա Քիլպատրիկին մեղավոր էր ճանաչել բռնաշորթության, խարդախության, կաշառակերության, հարկատվությունից խուսափելու մեջ:

Քիլպատրիկը քաղաքապետ էր ընտրվել 2001-ին: Այն ժամանակ շատերը հույս ունեին, թե այդ երիտասարդ, սեւամորթ քաղաքական գործիչը, որին համարում էին Դեմոկրատական կուսակցության ծագող աստղ, կկարողանա բարելավել քաղաքի տնտեսության ծանր վիճակը: Սակայն Քիլպատրիկը իր պաշտոնեական դիրքն օգտագործեց ոչ թե Դետրոյթի օգտին, այլ հանուն անձնական հարստացման:

2008-ին նա Դեմոկրատական կուսակցության համար տհաճություններ ստեղծեց նրանով, որ սուտ երդում տվեց՝ ժխտելով իր արտամուսնական կապը քաղաքային վարչակազմի նախկին ղեկավարի հետ: Քննության ընթացքում պարզվեց, որ մեղադրյալներն օգտագործել են պետական ֆոնդեր, վնաս պատճառելով որոշ անձանց, ծանակել արդարադատության համակարգը եւ հանրային վստահությունը:

Նույն թվականին Քիլպատրիկը թողեց պաշտոնը: Կաշառակերության, վատնողության, կեղծ վկայության, ոստիկանության աշխատակցուհու վրա կատարած հարձակման եւ մյուս հանցանքների համար նրան սպառնում էր մինչեւ 20 տարվա ազատազրկում: Սկզբում նրան ազատազրկեցին 120 օրով եւ պարտավորեցրին քաղաքի բյուջեին վճարել 1 մլն դոլար: Սակայն ազատ արձակվելուց հետո նա չկատարեց պարտավորությունները եւ շարունակեց վատնումները, ուստի կրկին բանտարկվեց:

2011-ի օգոստոսին նա ազատվեց Միչիգանի նահանգի «Ջեկսոն» բանտից, որտեղ 14 ամիս էր անցկացրել ազատման պայմանները խախտելու համար:

***ԸՆԴԱՌԱՋԵԼՈՎ ՎԱՇԻՆԳՏՈՆԻ՞ ՀՈՐԴՈՐՆԵՐԻՆ***

# Իրանը չեղյալ համարեց հակաիսրայելական կոնֆերանսը

Իրանի նախագահ Հասան Ռուհանիի վարչակազմը հոկտեմբերի 11-ին չեղյալ է հայտարարել ամենամյա հակաիսրայելական կոնֆերանսը, որը Թեհրանում ավանդաբար անցկացվում է 2005 թվականից: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Իրանի ղեկավարությունը հասկացրել է, որ կոնֆերանսը վերացվում է նոր իշխանությունների արտաքին քաղաքականությանը չհամապատասխանելու պատճառով: Ներկայիս իշխանությունները ջանում են «գտնել արտաքին աշխարհի հետ բնականոն փոխգործողության ուղիներ»:

Երկրի պահպանողականները արդեն դատապարտել են Ռուհանիի որոշումը, կոնֆերանսի վերացումն անվանելով «աղետ» եւ «իսկայական սխալ»: Միջոցառման կազմակերպիչները նշում են, որ «Նոր հորիզոններ» կոնֆերանսը խոշորագույն հակասիոնիստական ձեռնարկումն էր, որի վերացումը բացասաբար կազդի հակաիսրայելական շարժման վրա:

2013 թ. կոնֆերանսին պատրաստվում էին մասնակցել 63 օտարերկրացի հյուրեր եւ 50 իրանցիներ: Այդ մարդկանց հրավերներ ուղարկվել էին մայիսին, երբ նախագահը դեռ Մահմուդ Ահմադինեժադն էր: Հենց նրան են համարում ամենամյա հակաիսրայելական միջոցառման գլխավոր նախաձեռնողն ու ոգեշնչողը:

«Նոր հորիզոններ» կոնֆերանսը Թեհրանում սովորաբար անցկացվում էր սեպտեմբերի վերջերին-հոկտեմբերի սկզբներին:


## «ԱՃՅԱՆ ՏՈՒՐ»

**Երեւանում նորաբաց Աճյան տուրն առաջարկում է 8-օրյա (28.12.2013-04.01.2014) անմոռանալի հանգիստ Լիբանանում: Անցկացրեք Ամանորը Բեյրութի առաջին կարգի հյուրանոցում՝ վճարելով ընդամենը 1050€: Գինը ներառում է ավիատոմս, վիզա, նախաճաշ, ընթրիք, ամենօրյա պտույտներ, բացառիկ ճաշկերույթ հայկական Այնճար ավանում:**

**Աճյան տուրը կազմակերպում է ուղեւորություններ դեպի Կիպրոս, Քուրդիստանի Էրբիլ քաղաք, Ասորեստան, հայկական սրբատեղիներ եւ ցանկացած այլ ուղղությամբ:**

**Գրասենյակը զբաղվում է նաեւ հողերի առք ու վաճառքով:**

**Մանրամասների համար զանգահարեք մեզ հետեւյալ հեռախոսահամարներով՝**
**093 38 48 70, 055 69 56 19, 055 04 81 26**
**կամ գրեք՝ maghov5@gmail.com**


## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

**«Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության օրերը Հայաստանում եւ Արցախում» - 2013**

### 12 հոկտեմբերի, 2013

**10:00** ՀՀԿ Երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի հերթական համագումարը: Օրակարգը.
- ՀՀԿ ԵԿԱ Խորհրդի հաշվետվությունը իրականացրած աշխատանքների վերաբերյալ
- ՀՀԿ ԵԿԱ Խորհրդի նոր կազմի ընտրություն

***Վայրը՝ ՀՀ ԳԱԱ Նախագահության նիստերի դահլիճ***

**11:00** Ա.Աբրահամյանի հանդիպումը ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հ.Աբրահամյանի հետ:

**12:00** Մասնակցություն ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված ԱՊՀ երկրների հայ համայնքների ղեկավարների եւ ներկայացուցիչների ֆորումի աշխատանքներին:

### 13 հոկտեմբերի, 2013

**11:00-17:00** Այցելություն Հայաստանում տեղակայված ռուսական ռազմական բազա, ՌԴ ԴԱԾ սահմանապահ զորքեր եւ ավիացիոն գունդ: Սահմանապահների համար համերգների կազմակերպում «Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի փառատոնի դափնեկիրների ներգրավմամբ:


## Վաճառվում է

ավտոմեքենա «Daewoo Matiz» 2009 թ., փոխանցման տուփը՝ մեխ., շարժիչը՝ 0,8 լ բենզին, վազքը՝ 93000 կմ, CDMP3 մագնիտաֆոն «Clarion», անվադողերը նոր են, մեքենան գտնվում է գերազանց վիճակում: Գինը՝ 3700 $-ին համարժեք դրամ:

Հեռ. (077) 700-710:

w w w . a z g . a m

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112


Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 11.10.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: